ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 14.05.2021թ.

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ
# ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
# ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
# թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/30

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ

Բողոք բերող՝ «Մեգիէլ» ՍՊԸ

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ

ՀՀ ֆինանսների նախարարություն

ՀՀ առողջապահության նախարարություն

Երևանի քաղաքապետարան

Մասնակցությամբ՝

«Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն՝ Մ. Ադամյանի, ներկայացուցիչներ՝ Տ. Ջիլավյանի, Կ. Դրամբյանի,

«Մեգիէլ» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ Ա. Սարգսյանի, Գ. Աբրահամյանի,

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի ներկայացուցիչ՝ Լ. Վարոսյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/44» ծածկագրով բաց մրցույթ, բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Մեգիէլ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 14.04.2021թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**1. <u>Գործի նախապատմությունը.</u>**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին չկայացած համարելու «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/44» ծածկագրով բաց մրցույթի գնման ընթացակարգի 1-9-րդ և 11-13-րդ չափաբաժինները կամ կատարել փոփոխություններ:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 14.04.2021թ.-ին:

15.04.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ, տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/30 համարի ծածկագիրը:

19.04.2021թ.-ի Ընկերության միջնորդության հիման վրա, Բողոքներ քննող անձի 26.04.2021թ.-ի թիվ /ԲՔԱ-ԼՕ/1/6340-2021 գրությամբ՝ բողոքարկման ընթացակարգում որպես կողմ է ներգրավվել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը:

Նույն միջնորդության հիման վրա բողոքարկման ընթացակարգում որպես կողմ են ներգրավվել նաև ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ առողջապահության նախարարությունը և Երևանի քաղաքապետարանը:

23.04.2021թ.-ին, 29.04.2021թ.-ին, 07.05.2021թ.-ին և 14.05.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 07.05.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 14.05.2021թ.-ին:

**2. <u>«Մեգիէլ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

«Մեգիէլ» ՍՊԸ-ն 14.04.2021թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

*«1.1 Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության (հետայսու Պատվիրատու) կողմից հայտարարվել է ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/44 ծածկագրով բաց մրցույթ, որն իրականացվելու է մեկ փուլով:*

*1.2 Հրավերը հրապարակվել է 06.04.2021թ և մասնակցության հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 21.04.2021թ. ժամը՝ 12:00 ներառյալ: Հայտերի բացումը տեղի է ունենալու 21.04.2021թ ժամը 12:00-ին:*

*1.3 «Մեգիէլ» ՍՊ ընկերությունը (հետայսու՝ Ընկերություն) ՆՄԲԳ-ԲՄԱՊՁԲ-21/44 ծածկագրով մրցույթին մասնակցելու նպատակով ուսումնասիրելով հրավերը՝ տեխնիկական բնութագրերում արձանագրել է «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված պահանջների անհամապատասխանություն:*

*1.4 Ըստ Ընկերության «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշման պահանջին չեն համապատասխանում մրցույթի 1-9 և 11-13-րդ չափաբաժինները:*

*«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն Օրենքի նպատակն է ի թիվս այլի գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացումը:*

*Համաձայն Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.*

*1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խարական հիմունքներով կազմակերպում.*

*2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջեվ մրցակցության խրախուսում.*

*3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:*

*Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:*

*Ներկայացված նորմերի վերլուծությունից փաստում ենք, որ գնումների օրենսդրությունը հիմնվում է գնման գործընթացի մրցակցային, թփանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, ապահովելով գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:*

*Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝*

*1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց*

*ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով փարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:*

*2. Գնման առարկայի բնութագրերը՝*

*1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.*

*2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.*

*3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.*

*4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:*

*3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:*

*4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:*

*ՀՀ Կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշման (հետայսու՝ Կարգ) 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ՝ բացառությամբ գնումը սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված հիմքով կատարելու դեպքերի:*

*Օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ արգելվում է խմբավորել առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները մեկ չափաբաժնում, բացառությամբ այն դեպքերի, երբ պատվիրատուն հիմնավորում է նման խմբավորման անհրաժեշտությունը:*

*Վիճարկվող հրավերի տեխնիկական բնութագրերի 1-9 և 11-13-րդ չափաբաժինների նկարագրությունը չեն համապատասխանում նշված նորմի պահանջներին:*

*ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/44 ընթացակարգի 1-9 և 11-13-րդ չափաբաժինների վերաբերյալ պարզաբանում ստանալու նպատակով հարցադրումներ էր ներկայացվել ընթացակարգի գնահատող հանձնաժողովին:*

*Հարցադրումների վերաբերյալ տրված պարզաբանումն ամբողջական, սպառիչ և հիմնավորված չէ:*

*Վիճարկվող չափաբաժիններով խմբավորված են առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաներ, սակայն դրա անհրաժեշտության հիմնավորում Պատվիրատուն չի ներկայացրել:*

*Պատվիրատուին ներկայացվել է հետևյալ հարցադրումները պարզաբանման համար.*

*1. 1-ին չափաբաժնով պահանջում եք տարբեր չափերի և ձևերի կաթետր ախտորոշիչ, այսինքն տարբեր ապրանքներ 2000 հատ, խնդրում ենք հստակ նշել և հրավերում կատարել փոփոխություն, թե ո՞ր չափից և ձևից քանի հատ եք պահանջում որպեսզի հնարավոր լինի ժամանակին իրականացնել մատակարարում, քանի որ բոլոր տեսակներից, յուրաքանչյուրից 2000 հատ հնարավոր չէ ներկրել և պահեստավորել: Հետևաբար անհրաժեշտ է չափերը, համապատասխանաբար տեսակները, ներկայացնել առանձին չափաբաժիններով:*

*2. Նույն տրամաբանությամբ ներկայացված են մյուս չափաբաժինները, ներկայացված են տարբեր չափերի ապրանքներ և նշված է որոշակի քանակ, անհրաժեշտ է հստակեցնել, թե որ չափից քանի հատ եք պահանջում, խնդրում ենք փոփոխություն կատարել հրավերում և ներկայացնել ապրանքներն առանց խմբավորման հստակ նշելով քանակը կախված չափից:*

*3. 6-8-րդ չափաբաժիններով պահանջվում է դեղապատ ստենտ սիրոլիմուս և էվերոլիմուս դեղանյութով. Դեղանյութի նշումով սահմանափակվում է հնարավոր մասնակիցների հայտ ներկայացնելու իրավունքը, այսինքն մեկ այլ լիմուս ընտանիքի դեղանյութով ստենտների մատակարար հնարավոր մասնակիցները չեն կարող մասնակցել ընթացակարգին: Խնդրում ենք փոփոխել նշված չափաբաժինների տեխնիկական բնութագիրը, նշելով պահանջվող դեղանյութը «լիմուս ընտանիքի», որի դեպքում կարող են հայտ ներկայացնել ինչպես էվերոլիմուս, սիրոլիմուս, այնպես էլ՝ զոտրոլիմուս դեղանյութով ստենտներ:*

*Միևնույն ժամանակ տարակուսելի է, եթե դեղանյութի տեսակը կարևորագույն հանգամանք է հիվանդների անվտանգության, անդառնալի հետևանքներից զերծ մնալու համար, ապա ինչու առհասարակ դեղանյութի պահանջ առկա չէ 9-րդ չափաբաժնում ավելին այլ չափորոշիչներ էլ առկա չեն ինչպես 6-8-րդ չափաբաժիններում:*

Այս երկակի մոտեցումից եզրահանգում ենք, որ 6-8-րդ չափաբաժիններով ներկայացված չափորոշիչները կարևոր բաղադրիչներ չեն հիվանդների անվտանգության համար, այլապես նույն չափանիշների կարևորությունը առկա կլիներ 9-րդ չափաբաժնում, ուստի միտումնավոր սահմանափակումներ եք առաջացնում հնարավոր մասնակիցների համար: Խնդրում ենք պարզաբանել և հստակեցնել տեխնիկական բնութագրերը ներկայացվածի վերաբերյալ:

4. 11-13-րդ չափաբաժիններով պահանջվող բիոլոգիական և մեխանիկական փականների երկու տեսակի 5-ից ավելի չափերի ապրանքները ներկայացված են մեկ չափաբաժնով, խնդրում ենք պարզաբանել յուրաքանչյուր տեսակից և չափից քանի հատ եք պահանջում և ըստ դրա փոփոխել տեխնիկական բնութագիրը, առանձնացնելով՝ տեսակների և չափերից կախված առանձին չափաբաժիններով:

Հարցադրումների վերաբերյալ Պատվիրատուն հայտնել է հետևյալը.

Պարզաբանում 1.

Նշված հարցի շուրջ եղել է բողոք և դրա վերաբերյալ կայացվել է ԳԲՔԱ-ԼՕ-2021/11 որոշումը: Բողոքի քննության արդյունքում պատվիրատուն հիմնավորել է տարբեր ապրանքների մեկ չափաբաժնում խմբավորելու անհրաժեշտությունը, ինչի արդյունքում բողոքը բավարարվել է մասնակի Պատվիրատուին պարտավորեցնելով հրավերում կատարել այնպիսի փոփոխություն, որ տեխնիկական բնութագրերին բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ: Հրավերում կատարված փոփոխության արդյունքում ապահոված են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի, 25-րդ հոդվածի, ՀՀ Կառավարաթյան 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի 22-րդ կետի, ինչպես նաև ԳԲՔԱ-ԼՕ-2021/11 որոշման պահանջները:

Ելնելով վերոգրյալից հայտնում ենք որ դիմողի առաջարկը ընդունելի չէ Պատվիրատուի կողմից:

Պարզաբանում 2.

Դեղի նյութը, շատ կարևոր և էական ցուցանիշ է, ուստի դրա նշելը բխում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներից:

Ինչ վերաբերվում է 9-րդ չափաբաժնում դեղը չնշելուն, ապա Պատվիրատուն հստակ գիտի թե ինչ դեղածածկով է օժտված տվյալ չափաբաժնում նկարագրված ապրանքը, սակայն դրա հստակ նշելու պարագայում չի ապահովվում ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի 22-րդ կետի պահանջները, կամ առնվազն Պատվիրատուն չունի տեղեկություն մեկից ավելի

*արտադրողի առկայության վերաբերյալ: Հետևաբար, կարգի պահանջը չխախտելու նպատակով Պատվիրատուն 9-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրերից բացառել է դեղի նյութի վերաբերյալ նշումը: Նման իրավիճակ առկա չէ 6-8-րդ չափաբաժիններում, ուստի այնտեղ ներառված են դեղի նյութի տվյալը: Գտնում ենք, որ Ձեր հարցադրումը և պահանջը հիմնավոր չէ:*

*Պարզաբանում 3.*

*Հրավերով նախատեսված փականներն ունեն այնպիսի առանձնահատկություն, որը թույլ չի տալիս նախորոք կանխատեսել կիրառման ենթակա կոնկրետ չափը և ձևը: Այսինքն, հիվանդից կախված կարող է լինել տարբեր չափերի և ձևի անհրաժեշտություն և Պատվիրատուի մոտ փաստացի ծախսից հետո միայն պարզ է դառնում ծախսված ապրանքի մատակարարման և պահեստավորման անհրաժեշտությունը: Հիվանդի կյանքին վտանգ սպառնացող իրավիճակ չունենալու համար Պատվիրատուն (բնականաբար նաև Մատակարարը Ըստ Պատվիրատուի պետք է ապահովի բոլոր հնարավոր չափերի առկայություն: Այս առանձնահատկությունից ելնելով Պատվիրատուները չեն կարող ըստ առանձին չափերի և ձևի նախապես կատարել քանակական կանխատեսումներ: Հետևաբար, առանձին չափաբաժիններ առանձնացնելու հետ կապված Ձեր առաջարկը ընդունելի չէ Պատվիրատուի կողմից:*

*> Պատվիրատուն իր պարզաբանմամբ ճիշտ չի ներկայացնում ԳԲՔԱ-ԼՕ-2021/11 որոշման եզրահանգումներն ու վերլուծությունը, մասնավորապես որոշման ուսումնասիրությունից չենք կարող արձանագրել գեթ մեկ եզրահանգում, որ բողոքներ քննող անձն արձանագրած լինի, թե Պաավիրաաուն հիմնավորել է Օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասով խմբավորման անհրաժեշտությունը:*

*> ԳԲՔԱ-ԼՕ-2021/11 որոշմամբ բողոքներ քննող անձը եզրահանգել էր, որ 15.02.2021թ հրապարակված ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/44 ընթացակարգի 1-9-րդ չափաբաժիններ տեխնիկական բնութագրերը չեն ապահովում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի և Կարգի 22-րդ կետի պահանջները: Այնուհետև, բողոքներ քննող անձը եզրահանգել է, որ Օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված իրավակարգավորման կիրառման համար՝ անկախ հիմնավոր լինելու կամ չլինելու և հիմնավորվածության աստիճանի (օբյեկտիվ հանգամանքներից ելնելով) Պատվիրատուն նախ և առաջ պետք է հաշվի առնի Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի և Կարգի 22-րդ կետով նախատեսված դրույթները հնարավոր մասնակիցների համար ապահովի մրցակցության հավասար պայմաններ, դրանով իսկ բացառելով գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացումը:*

*Այսպիսով չենք արձանագրում, որ բողոքներ քննող անձը ԳԲՔԱ-ԼՕ-2021/11 որոշմամբ հիմնավորված համարի առանձին բնութագրեր ունեցող առարկաների խմբավորման անհրաժեշտությունը: Պատվիրատուն սուբյեկտիվ ընկալմամբ է մեկնաբանում որոշման եզրահանգումները:*

*06.04.2021թ. հրապարակված ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/44 ընթացակարգի 6-9-րդ չափաբաժիններով Պատվիրատուն պահանջում է սպենտ դեղապատ:*

*6-8-րդ չափաբաժիններով պահանջվում է դեղապատ սպենտ սիրոլիմուս և էվերոլիմուս դեղանյութով, 9-րդ չափաբաժնով դեղանյութի տեսակի պահանջ չի ներկայացնում, ինչպես նաև 9-րդ չափաբաժնով չի ներկայացնում սպենտի համար «կարևորագույն» այն չափորոշիչները, որոնք ներկայացված են 6-8-րդ չափաբաժինների համար:*

*Պատվիրատուն իր պարզաբանմամբ հայտնում է հետևյալը՝ դեղի նյութը, շատ կարևոր և էական ցուցանիշ է, ուստի դրա նշելը բխում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներից:*

*Ինչ վերաբերվում է 9-րդ չափաբաժնում դեղը չնշելուն, ապա Պատվիրատուն հստակ գիտի թե ինչ դեղածածկով է օժտված տվյալ չափաբաժնում նկարագրված ապրանքը, սակայն դրա հստակ նշելու պարագայում չի ապահովվում ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526- Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի 22-րդ կետի պահանջները, կամ առնվազն Պատվիրատուն չունի տեղեկություն մեկից ավելի արտադրողի առկայության վերաբերյալ: Հետևաբար, կարգի պահանջը չխախտելու նպատակով Պատվիրատուն 9-րդ տեխնիկական բնութագրերից բացառել է դեղի նյութի վերաբերյալ նշումը:*

*Այսպիսով, Պատվիրատուն հավաստում է, որ 6-8-րդ չափաբաժիններով նշելով դեղանյութի տեսակը չի ապահովում Կարգի 22-րդ կետի պահանջը: Միևնույն ժամանակ պատճառաբանում է, որ դեղանյութը շատ կարևոր և էական ցուցանիշ է ուստի 6-8-րդ չափաբաժիններով նշել է: Պատվիրատուի պարզաբանման տրամաբանությունը հակասական է: Դեղանյութը էական և կարևոր ցուցանիշ լինելով՝ 9-րդ չափաբաժնով չի կարևորում դրա առկայությունը, սակայն պատճառաբանում է, որ իր համար հստակ պարզ է թե ինչ դեղանյութով է:*

*Պատվիրատուի «պարզաբանումը» հիմնավորումն է այն բանի, որ 6-9-րդ չափաբաժիններով ներկայացված տեխնիկակն բնութագրերը չեն ապահովում Օրենքի 13-րդ հոդվածի և Կարգի 22-րդ կետի պահանջը, և այս իրողության պարագայում խմբավորված է ներկայացված առանձին բնութագրեր ունեցող ապրանքներն առանց հիմնավորման, բացի*

*այդ ԳԲՔԱ-ԼՕ-2021/11 որոշմամբ բողոքներ քննող անձը եզրահանգել է հետևյալը. Օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված իրավակարգավորման կիրառման համար անկախ հիմնավոր լինելու աստիճանի (օբյեկտիվ հանգամանքներից ելնելով) Պատվիրատուն նախ և առաջ պետք է հաշվի առնի Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի և Կարգի 22-րդ կետով նախատեսված դրույթները հնարավոր մասնակիցների համար ապահովի մրցակցության հավասար պայմաններ, դրանով իսկ բացառելով գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացումը:*

*Սակայն, Պատվիրատուի համար, վկայակոչված որոշումը իրավապարտադիր չէ, փաստ 06.04.2021թ հրապարակված ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/44 ընթացակարգի սույն բողոքով վիճարկվող չափաբաժինները:*

*Գնահատող հանձնաժողովը չի պարզաբանել, որ եթե 6-9-րդ չափաբաժիններով պարզապես նշվեր դեղանյութը լիմուս ընտանիքի ապա արդյոք դեղապատ ստենտը չէր ապահովի իր նպատակային նշանակության արդյունքը: Այսպիսով, հստակ նշելով դեղանյութը սահմանափակվում է մասնակիցների շրջանակը:*

*Պատվիրատուի ներկայացրած տեխնիկական բնութագրերը պետք է լինեն հստակ ընկալելի, խոչընդոտներ չառաջացնող, տարընկալման տեղիք չտվող, մասնակցությունը՝ չսահմանափակող, հնարավոր մասնակիցների ընդլայնման նպատակ ապահովի և ոչ թե՝ քողարկված ցուցիչով Պատվիրատուի համար հստակություն ապահովի, փաստացի Պատվիրատուն ներկայացրած տեխնիկական բնութագրերով կանխորոշում է առաջին տեղ զբաղեցնողին, ավելին տեխնիկական բնութագրերը կազմում է նրանց առաջին տեղն ապահովելու համար:*

*6-րդ չափաբաժնով պահանջվում է դեղապատ ստենտի ճաղերի հաստությունը ոչ ավել քան 81 միկրոն, սակայն 7-9 չափաբաժիններով չի ներկայացնում միկրոնի չափի պահանջ, կամ միկրոնի չափը կարևոր քաղադրիչ չէ կամ արդեն իր համար հստակ է 7-9-րդ չափաբաժիներով հայտ ներկայացնողի առաջարկած ապրանքի միկրոնի չափը (ինչպես 9-րդ չափաբաժնով դեղանյութը չնշելու պատճառաբանությամբ):*

*Պատվիրատուի գնահատող հանձնաժողովը պարզաբանում չի ներկայացրել առաջադրված բոլոր հարցերի վերաբերյալ, մինչդեռ՝ պարզաբանում չտրամադրելու մեկ պայման է սահմանված Կարգի 32-րդ կետի 22-րդ ենթակետով, վերաբերյալ մասնակցին չի տրամադրվում պարզաբանում եթե հարցումը վերաբերում է վերջինիս կողմից առաջարկվեիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների տեխնիկական բնութագրերի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համարժեքության համապատասխանությանը:*

*Վիճարկվող չափաբաժիններով մեկ չափաբաժնով խմբավորված առանձին բնութագրերով ապրանքների պարագայում, որը հստակ չէ, թե որ ապրանքից քանի հատ է պահանջելու կամ առհասարակ պահանջելու է Պատվիրատուն, թե՝ ոչ, սահմանափակում է մեկից ավելի հնարավոր մասնակիցների մասնակցությունը:*

*Պատվիրատուին պարտավորեցնել մեկ չափաբաժնով խմբավորված տարբեր ապրանքները ներկայացնել առանձին չափաբաժիններով, ապահովելով ոլորտը կարգավորող օրենսդրի պահանջը: Ի դեպ դրանք իմպերատիվ նորմեր են և հայեցողական մեկնաբանության արդյունքում հարմարությունից ելնելով առաջնորդվելու իրավասությամբ օրենսդիրը կիրառողներին չի լիազորել:*

*Վիճարկվող տեխնիկական բնութագրերը չեն ապահովում Օրենքի 13-րդ հոդվածի և Կրագի 22-րդ կետի պահանջը և ներկայացված տեխնիկական բնութագրերով մրցույթ իրականցնելու դեպքում կխախտվի նաև Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի պահանջը:*

*Սույն բողոքը համապատասխանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին.*

*1. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝*

*1) բողոքը ներկայացրած անձի անվանումը (անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի պատճենը) և հասցեն.*

*2) պատվիրատուի անվանումը և հասցեն.*

*3) բողոքարկվող գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան.*

*4) վեճի առարկան և բողոքը ներկայացրած անձի պահանջը.*

*5) բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները.*

*6) բողոքարկման վճարը կատարած լինելը հիմնավորող փաստաթղթի պատճենը:*

*7) այլ անհրաժեշտ տեղեկություններ:*

*Օրենսդրի կողմից սահմանված վերոնշված պահանջներն առկա են սույն բողոքում: Համաձայն նշված հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի բողոքվ ներկայացված է վեճի առարկան և պահանջը:*

*Եթե բողոքով ներկայացված վեճի առարկայի և պահանջի միջև ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի դիտարկմամբ կան որոշակի անհստակություններ, ապա դա ամենևին բողոքը վերադարձնելու հիմք չի կարող լինել:*

*Ներկայացված բողոքի իրավական հիմքերի և ապացույցների լրացման, փոփոխման նպատակով բողոքաբերը սահմանափակված չէ և դրանք կարող է ներկայացնել նաև*

*բողոքի քննության ընթացքում, ինչ վերաբերում է բողոքի պահանջին և վեճի առարկային, ապա այդ առումով ևս բողոքաբերը սահմանափակված և կաշկանդված չէ լրացնելու և/կամ փոփոխելու, հստակեցնելու բողոքի քննության ընթացքում, ընդհուպ մինչև բողոք քննող անձի կողմից որոշում կայացնելը: Պահանջի փոփոխման, լրացման կամ նոր ապացույցներ և իրավական հիմքեր ներկայացնելու անհրաժեշտությունը կարող է առաջանալ նաև կապված Պատվիրատուի ներկայացրած դիրքորոշումից:»:*

Ելնելով վերոգրյալներից՝ Ընկերությունը Բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին չկայացած համարելու «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/44» ծածկագրով բաց մրցույթի գնման ընթացակարգի 1-9-րդ և 11-13-րդ չափաբաժինները կամ կատարել փոփոխություններ:

«Մեգիէլ» ՍՊԸ-ն 20.04.2021թ.-ի ներկայացված բողոքի լրացմամբ հայտնել է հետևյալը.

*«1. ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/44 ընթացակարգի 2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժիններով պահանջվում է կաթետր բալոն, 2-րդ չափաբաժնով 150 հատ, 3-րդ չափաբաժնով 50 հատ և 4-րդ չափաբաժնով 400 հատ: Նշված երեք չափաբաժինների միակ տարբերող չափորոշիչը 2-րդ, 3-րդ չափաբաժինների համար երկարությունը ամենակարճը ոչ ավել քան 8մմ, իսկ 4-րդ չափաբաժնի համար երկարության ամենակարճ չափը ոչ ավել քան 10մմ է սահմանված:*

*Այսպիսով, ըստ էության Պատվիրատուն երեք չափաբաժնով պահանջում է նույն ապրանքը, հարց է առաջանում այդ դեպքում ինչու է նույն ապարնքը բաժանել երեք չափաբաժնով, ինչ է սա, եթե ոչ քողարկող հղում այդ չափաբաժիններով մասնակցության հայտ ներկայացնող սուբյեկտին, որը հանդես է գալու այն ֆիրմային արտադրանքով, որով պետք է հայտ ներկայացներ 15.02.2021թ հրապարակված ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/44 ծածկագրով հրավերի տեխնիկական բնութագրով, որտեղ նշված էին ֆիրմային անվանում և մոդել:*

*Բազմիցս Պատվիրատուն բողոքների քննարկման ժամանակ հայտարարում է, որ հիվանդների կյանքի և առողջության անվտանգությունը առաջնային է բժշկական կենտրոնի համար, ուստի գնվող ապրանքների նկարագրերը ներկայացվում են խիստ չափորոշիչներով, հիմնականում չափերի մասով առանց տիրույթ նշելու (երբեմն տարակուսելի է Պատվիրատուի մաթեմատիկական հաշվարկի նմանվող թվերի ներկայացումը), պատճառաբանելով, որ եթե նշված պայմանականորեն 1 մմ-ից ավել լինի առաջարկվող ապրանքի չափորոշիչը, ապա ռիսկային կլինի հիվանդի կյանքի համար: Մինչդեռ, վիճարկվող 2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժիններով այլ պատկեր է ստացվում, այսպես.*

*4-րդ չափաբաժնով ապրանքի ամենակարճ չափ է պահանջվում ոչ ավել քան 10մմ, որը ենթադրում է, որ Պատվիրատուի համար ընդունելի է նաև 7մմ, 8մմ կամ 9մմ*

*երկարությամբ մատակարարվող ապրանքը, այս դեպքում ինչու է 2-րդ և 3-րդ չափաբաժիններով սահմանափակում 8 մմ-ով, միթե 4-րդ չափաբաժնով ձեռք բերվող ապրանքի կիրառությունը հիվանդի համար կարող է նպաստավոր կամ վտիթարացնող լինել կապված չափից կամ ճիշտ հակառակը, 2-րդ և 3-րդ չափաբաժիններով ձեռք բերվող ապրանքների հետևանքը կարող է այդպիսին լինել:*

*Եթե նմանօրինակ ուղղորդող ձևաչափով ներկայացված տեխնիկական բնութագրով Պատվիրատուն միտում չունի ապահովելու հստակ մասնակցի համար առաջին տեղը տվյալ չափաբաժնով, ապա 2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժիններով պահանջվող կաթետր բալոն բժշկական պարագան պետք է ներկայացներ մեկ չափաբաժնով, նշելով պահանջվող քանակը 600 հատ, իսկ եթե այնուամենայնիվ երկարության ամենակարճ չափի շեմը կարևորագույնն է ռիսկայնության տեսակետից, ապա պետք է նշի տիրույթով, օրինակ երկարության ամենակարճ չափը ոչ ավել քան 8-10 մմ:*

*2. 6-8-րդ չափաբաժիններով պահանջվող դեղապատ ստենտները ներկայացված են վերոնշված տարբերակով: Այսպես 6-րդ չափաբաժնով ներկայացված չափորոշիչներից տարբերակողը 81 միկրոն չափորոշիչն է, իսկ 7-րդ և 8-րդ չափաբաժիններում այդ չափորոշիչը չի պահանջվում: 81 միկրոն չափորոշիչով սահմանափակում է 6-րդ չափաբաժնի մրցակցությունը ապահովելով հստակ մասնակցի համար առաջին տեղը տվյալ չափաբաժնով:*

*Ինչպես նաև 7-րդ և 8-րդ չափաբաժիններում 2.5-4.0 մմ տրամագծերի դեպքում ամենակարճը ոչ ավել քան 8մմ է պահանջում, իսկ 6-րդ չափաբաժնով նույն չափորոշիչի դեպքում 9մմ է պահանջում: Սա ևս վկայումն է այն բանի որ քողարկված ուղղորդում է իր համար կանխատեսելի մասնակցի համար, մինչդեռ 6-8-րդ չափաբաժիններով պահանջվող բժշկական պարագան պետք է ներկայացվեր մեկ չափաբաժնով, միլիմետրերի դեպքում նշելով տիրույթ, օրինակ 8-9մմ, իսկ միկրոնի չափորոշիչը կարևորագույն բաղադրիչն է ապա ինչու է այն բացակայում մյուս չափաբաժիններում:*

*3. Մրցույթի արդյունքում կնքվող պայմանագրով մատակարարման համար Պատվիրատուն սահմանում է 5 աշխատանքային օր պատվերը ներկայացնելուց հետո: Գործնականում հնարավոր չէ պատվերի մատակարարումը կատարել չափից դուրս սուղ, ոչ իրատեսական ժամկետում, ուստի անհրաժեշտ է պատվեր տալուց հետո մատակարարման համար սահմանել ողջամիտ ժամկետ, նկատի ունենալով, որ ներկրման համար անհրաժեշտ է 15-20 օր:*

*Սահմանված 5 աշխատանքային օրվա ընթացքում մատակարարում իրականացնելը կարող էր հնարավոր և հիմնավորված լիներ, եթե Պատվիրատուն պահանջվող ապրանքները*

*խմբավորված չներկայացնի և հստակ նշի, թե ո՞ր չափի և ձևի բուժ պարագայից քանի հատ պետք է մատակարարվի:*

*Ընկերությունը հարցում է ներկայացրել օդային արագ ճանապարհով ներմուծում իրականացնող ընկերություններին, որոնք հայտնել են, որ փոխադրումները հնարավոր է իրականացնել 3-7 աշխատանքային օրվա ընթացքում, սակայն այդ ժամկետը հստակ չի կարող լինել, քանի որ փոխադրումների ժամանակ առաջանում են անկանխատեսելի խոչընդոտներ:*

*Բացի այդ, մինչ փոխադրում իրականացնելը, մատակարարը պետք է պատվեր ներկայացնի արտադրող ընկերությանը, որն էլ իր հերթին պետք է պատրաստի մատակարարվող ապրանքը փոխադրողին հանձնելու համար: Այս հաջորդիվ գործողությունները ավելի քան 5 աշխատանքային օր են պահանջում, ուստի Պատվիրատուի կողմից պատվեր ներկայացնելուց հետո, այդ ժամկետում մատակարարում ապահովել անհնար է:*

*«Գնումների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից:*

*Քանի որ Օրենքով հստակ կարգավորված չէ մատակարարման ողջամիտ ժամկետ, ուստի պետք է ղեկավարվել ՀՀ քաղաքացիակւսն օրենսգրքի նորմերով:*

*ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 437-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ եթե պայմանագրի պայմանը սահմանված չէ կողմերի համաձայնությամբ կամ դիսպոզիտիվ նորմով, համապատասխան պայմանը որոշվում է կողմերի հարաբերությունների նկատմամբ կիրառվող գործարար շրջանառության սովորույթներով:*

*ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/44 ընթացակարգով պայմանագրի մատակարարման ժամկետ սահմանված չէ կողմերի համաձայնությամբ և դիսպոզիտիվ նորմով էլ կարգավորված չէ: Ելնելով գործարար շրջանառության սովորույթներից ապրանքի ներկրումը տեղի է ունենում 15-20 աշխատանքային օրվա ընթացքում, հետևաբար 5 աշխատանքային օրվա ընթացքում մատակարարում ապահովելն իրատեսական չէ, հատկապես այն դեպքում, երբ տեխնիկական բնութագրերով մեկ չափաբաժնի ներքով ներառված են մի քանի չափերի ապրանքներ անորոշ քանակի պահանջով:*

*Այսպիսով, պայմանագրով նախատեսված մատակարարման 5 աշխատանքային օրը չփոփոխելու դեպքում մատակարարները կանգնած կլինեն այն իրողության առաջ, որ 5 օրվա ընթացքում չմատակարարելու դեպքում, պատվիրատուն պայմանագիրը միակողմանի*

*կդադարեցնի և կնախաձեռնի մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:»:*

07.05.2021թ.-ին ներկայացրած բողոքի մեկ այլ լրացմամբ, Ընկերությունը հայտնել է հետևյալը.

*««Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությունը 23.04.2021թ թիվ 08-217 միջնորդությամբ հայտնել էր, որ բողոքով բարձրացված հարցերի վերաբերյալ դիմել է համապատասխան մասնագիտական կառույցի, խնդրահարույց հարցերի շուրջ մասնագիտական կարծիք ստանալու համար:*

*29.04.2021թ կայացած բողոքի քննարկման նիստում Պատվիարտուն ներկայացրել է 20.04.2021թ կազմված «Մասնագիտական կարծիք» վերնագրով մի «թուղթ» ինչպես նշեց տնօրեն Մ. Ադամյանը:*

*1. Ուսումնասիրելով 20.04.2021թ մասնագիտական կարծիքն արձանագրում ենք հետևյալը.*

*23.04.2021թ միջնորդությամբ Պատվիրատուն հայտնում է, որ բողոքով բարձրացված հարցերի վերաբերյալ դիմել է համապատասխան մասնագիտական կառույցի: 23 ապրիլի 2021թ նիստում հայտնեց, որ այդ մասնագիտական կառույցը բժիշկների ասոցացիան է: 20.04.2021թ թվագրված գրությունը մասնագիտական կառույցի կողմից չի տրվել: 20.04.2021թ գրությամբ բժկական կենտրոնի տնօրեն Մ. Ադամյանը հարց է առաջադրել ինքն իրեն և հայտնել կարծիք, հավանաբար որպես բժիշկ:*

*Իր կարծիքի հավաստիությունը հիմնավորելու նպատակով այն ստորագրել են բժիշկներ: Գրությամբ երեք հարցադրում է ներկայացված որոնցից 1-ինը և 3-րդը վերաբերում են կառավարման և ապրանքների ձեռքբերմանը պայմանագրի կնքմանը, որի վերաբերյալ բժիշկների կողմից հավաստումը, որ համաձայն են դիրքորոշման հետ, որքանով է ընդունելի: Ինչ վերաբերում է 2-րդ հարցադրմանը այն է նույն անոթի մեջ միաժամանակ տարբեր արտադրողների դեղապատ ստենտեր տեղադրելուն, ապա դա բողոքի շրջանակից չի բխում:*

*Հարց - 1. արդյոք 20.04.2021թ կարծիքը ստորագրող բժիշկները իրազեկված են եղել բողոքի առկայության մասին,*

*2. արդյոք իրազեկված են եղել բողոքով բարձրացված օրենքի խախտումների մասին և Մ. Ադամյանի կարծիքի հետ համակարծիք են բողոքի կոնտեքստից ելնելով,*

*3. արդյոք իրազեկված են եղել, որ այդ «թուղթը» ներկայացվելու է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին և Մ. Ադամյանի կարծիքը կիսելու հինավորվածության վերաբերյալ կարող են հրավիրվել և պատասխանել որոշ հարցերի, այդ թվում որքանով են*

*իրավասուն պայմանագրային հարաբերությունների վերաբերյալ տեսակետ կիսել որպես բժիշկ:*

*Բողոքովը վերաբերում է հրավերի տեխնիկական բնութագրերին, դրանք օրենքի կարգավորումներին համապատասխան ներկայացնելուն, մասնակիցների շրջանակի ընդլայնման, տեխնիկական բնութագրերի հստակ, պարզ լինելուն, ոչ թե պատվիրատուի այլ հնարավոր մասնակիցների, և տարբեր ապրանքների խմբավորման անթույլատրելիությանը և այլն:*

*Պետական գնումները կազմակերպելիս Օրենքով և Կարգով ղեկավարվելը պարտադիր է, քանի որ /Հայաստանի Հանրապետությունը իրավական պետություն է, ուստի պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:*

*Պետական գնումների կազմակերպման ընթացքում և առհասարակ բժշկական կենտրոնը ղեկավարելիս Պատվիրատուի տնօրեն Մ. Ադամյանը հանդես է գալիս որպես կառավարիչ և ոչ բժիշկ: Արդյունավետ կառավարման արդյունքում հնարավոր է ապահովել նաև որպես բժիշկ հայտնած իր դիրքորոշման առաջնայնությունը: Սակայն տարակուսելի է, որ Պատվիրատուի տնօրենը հակված է այն կարծիքին, ինչպես ներկայացվեց 29.04.2021թ նիստում, որ հիվանդների անվտանգությունը հնարավոր է ապահովել օրենքին չհամապատասխանող տեխնիկական բնութագրերով գնում իրականացնելու արդյունքում:*

*20.04.2021թ կարծիքի 2-րդ հարցադրման դիրքորոշմամբ Մ. Ադամյանն ուղղակիորեն հայտնում է, որ տեխնիկական բնութագրերի չափորոշիչները ներկայացվում են այնպես, որ մեկ մատակարարից իրականացվի գնում:*

*2. 04.05.2021թ թիվ 08-233 գրության վերաբերյալ ներկայացնում ենք հետևյալը՝ ուսումնասիրելով հղում արված կայքերում առկա տեղեկություն 1-ին չափաբաժին կաթետը ախտորոշիչ.*

*Infinity -_4Fr կաթետորների մասով արյան ծավալային հոսքի արագության մասին տեղեկություն առկա չէ,*

*Perfoma - կայքում առկա տեղեկությամբ AL1, AL2, AL3, JL4 արյան ծավալային հոսքի արագությունը 15մլ/վ է, իսկ բողոքարկվող տեխնիկական բնութագրով նույն չափորոշիչը պահանջվում է ոչ պակաս 16,7մլ/վ:*

*2-րդ և 3-րդ չափաբաժիններ կաթետր բալոն.*

*Emerge - համընկնում է, ի սկզբանե ներկայացված տեխնիկական բնութագրին, այսինքն բողոքով ներկայացված մեր տեսակետը, որ 15.02.2021թ հրապարակված հրավերի*

*տեխնիկական բնութագրից հանել է միայն ֆիրմային անվանումը, հավաստեց նաև ինքը Պատվիրատուն,*

*Trek - հղում արված կայքում 1,20մմ և 1,5մմ տրամագծերով նշված է որպես Mini Trek ապրանքի տեխնիկական հատկանիշ, որն ուրիշ ապրանքատեսակ է:*

*4-րդ չափաբաժին կաթետր բալոն*

*Երկուսն էլ համընկնում են, 15.02.2021թ հրապարակված տեխնիկական բնութագրով նշված էր Տերումո ֆիրմային անվանումը:*

*5-չափաբաժին կաթետր բալոն*

*Ryujin - ըստ ներկայացված կայքի հղման բոլորովին այլ ապրանք է,*

*Trek - ըստ կայքի տեղեկության 1,20մմ և 1,5մմ տրամագծերով նշվածա է որպես Mini Trek որն այլ ապրանք է:*

*6-րդ չափաբաժնին ստենտ դեղապատ*

*Ultimaster - բնականաբար համընկնում է 15.02.2021թ հրապարակած տեխնիկական բնութագրին, 06.04.2021թ հրապարակած տեխնիկական բնութագրում չի նշել ֆիրմային անվանումը, արտադրողը,*

*Biomime - հղում արված կայքում առկա չէ տեղեկություն 81 միկրոնի վերաբերյալ, 81 միկրոնը սահմանափակող չափորոշիչն է ինչպես հայտնել ենք և որը ապահովում է միայն Տերումո ֆիրման Ultimaster ապրանքով:*

*7-րդ և 8-րդ չափաբաժիններ ստենտ դեղապատ*

*Xience PRO - 06.04.2021թ տեխնիկական բնութագրով պահանջվում է 2,5-4,00 տրամագծերի դեպքում ամենակարճը ոչ ավել 8մմ, ամենակարճը ոչ ավել 38մմ, սակայն կայքում առկա տղեկությամբ Xience PRO արտադրանքը վերջանում է 28մմ-ով:*

*Promus Premier - համընկնում է, արտադրող Բոստոն Սայենտիֆիկ:*

*9-րդ չափաբաժին ստենտ դեղապատ*

*Xience Xpedition long - համընկնում է 15.02.2021թ հրապարակված հրավերի տեխնիկական բնութագրին, 06.04.2021թ տեխնիկական բնութագրից բացառել է արտադրողի անվանումը, ապրանքի տեսակը,*

*Biomime - կայքում նշված է, որ կոնկրետ երկար չափերի մասով պետք է տեղի մատակարարից ճշտել իրավունք ունի ներկրելու, թե՝ ոչ:*

*Այսպիով, Պատվիրատուն ևս մեկ անգամ հիմնավորեց, որ ինչպես 15.02.2021թ այնպես էլ 06.04.2021թ հրապարակված հրավերների տեխնիկական բնութագրերը չեն ապահովում Գնումների մասին ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 13-րդ, 25-րդ հոդվածների և Կարգի 22-րդ կետի պահանջները:*

*04.05.2021թ թիվ 08-233 գրության վերաբերյալ ներկայացված վերլուծության առարկայական հիմնավորումները կներկայցվեն 07.05.2021թ ժամը 15:15-ին կայանալիք լսման ժամանակ:*

*Խիստ ուշադրության արժանի իրողություն է այն, որ «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությունն ի դեմս տնօրեն Մ. Ադամյանի, մեր կողմից ներկայացված բողոքների քննարկման ընթացքում (ի դեպ 2020թ դեկտեմբերի 28-ից ի վեր ներկայացված բողոքները հիմնականում քննվել են Ձեր վարույթում, բացառությամբ երկուսի) հիմնական փաստարկները ներկայացնում են լիրիկական դաշտից (հայտնում է, թե վիրահատարանում ինչ կարող են բացահայտել բժիշկները ստենտավորման չափերի և այլ բուժ պարագաների կիրառման ընթացքում), դրա մասին նաև Դուք եք բարձրաձայնում, մինչդեռ բողոքներով ներկայացված փաստական հանգամանքները օրենսդրության տիրույթում՝ լուծում պահանջող հարցեր են, նպատակ ունենալով ապահովել օրենքի գերակայությունը պետական գնումների ոլորտում:*

*Ուշագրավ և գնահատման արժանի է նաև Պատվիրատուի ընդգծված, ակցենտավորված այն վերաբերմունքը և վարքագիծը, որ ինքը նպատակ է հետապնդում «Մեգիէլ» ՍՊ ընկերության մասնակցությունը սահմանափակել «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության կողմից հայտարարված մրցույթներում: Պատվիրատուն հիանալի իրազեկված է, որ «Մեգիէլ» ՍՊ ընկերության կողմից ներկրվող և մատակարարվող ապրանքները միջազգային մակարդակով լավագույն որակական հատկանիշներն են ապահովում (կորոնար ոլորտի լավագույն հնգյակում) և հիմնականում ցածր գնային առաջարկ է ներկայցնում, մրցունակ է այլ մասնակիցների հետ, սակայն Պատվիրատուն ունի իր «սրտի մատակարար» ընկերությունները: Մ. Ադամյանի անձնական հետաքրքրությունը հատկապես Մեդտրոնիք ֆիրմային արտադրանքն է, որ ցանկություն ունի այն մատակարարվի բացառապես «Կոստանյան և ընկերներ» ՍՊ ընկերության կողմից:*

*Մ. Ադամյանն իր այս անթաքույց նպատակի մասին 29.04.2021թ կայացած նիստում ափսոսանքով բարձրաձայնեց, որ «բողոք քննող տղերքը սև ցուցկ չքցեցին» «Մեգիէլ» ՍՊ ընկերությանը:*

*2021թ. առաջին երեք ամիսների ընթացքում «Մեգիէլ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացում մասնակցություն չունեցող անձանց ցուցակում ներառելու թվով 5 ընթացակարգ է հարուցվել և մերժվեր որից 4-ի նախաձեռնողը «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությունն է:*

*Մ. Ադամյանը իր անթաքույց ցանկության իրականացմանը հասնելու միջոց է ընտրել բողոքներ քննող անձանց ձեռամբ:»:*

Ներկայացված լրացմամբ Ընկերությունը, հստակեցնելով բողոքի պահանջը, Բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/44» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին փոփոխություններ կատարել հրավերի 1-9 և 11-13-րդ չափաբաժիններում բողոքով ներկայացված հիմնավորումներով և վերլուծությամբ,

- ➢ ապրանքների տեսակները համապատասխան չափերով առանձնացնել առանձին չափաբաժիններով նշել հստակ պահանջվող քանակ,
- ➢ տեխնիկական բնութագրերը համապատասխանեցնել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ, 13-րդ, 25-րդ հոդվածների և ՀՀ կառավարության 04.05.2021թ թիվ 526-Ն որոշման 22-րդ կետի պահանջներին,
- ➢ փոփոխել պայմանագրով սահմանվող մատակարարման ժամկետը՝ հաշվի առնելով հիմնավորումները:

12.05.2021թ.-ին ներկայացված մեկ այլ լրացմամբ, Ընկերությունը հայտնել է հետևյալը.

*««Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությունը 10.05.2021թ թիվ 08-448 գրությամբ ներկայացրել է ԳԲՔԱ-ԼՕ-2021/30 ծածկագրի ներքո քննվող բողոքի վերաբերյալ լրացուցիչ ապացույց, վերլուծություն:*

*1. «Պրոֆիտեստ» ՍՊ ընկերության ներկայացրած գնային առաջարկը չի կարող պատշաճ ապացույց հանդիսանալ, քանի որ մասնակիցների կողմից ներկայացվող տեխնիկական բնութագրերը և Հավելված 1 դեռևս պետք է գնահատման փուլ անցնի պատվիրատուի կողմից և բացարձակ չի նշանակում, որ «Պրոֆիտեստ» ՍՊ ընկերության ներկայացրած ապրանքների նկարագիրը հավաստի տեղեկություն է:*

*2. Մերիլ Biomime ապրանքատեսակի այլ չափորոշիչները արդյոք համընկնում են 06.04.2021թ հրապարակված տեխնիկական բնութագրի 6-րդ չափաբաժնին, իսկ 81 միկրոնը այնուամենայնի սահմանափակող չափորոշիչ է և ինչպես ներկայացրել էինք բողոքով, 6-րդ չափաբաժնի չափորոշիչներին համապատասխանում է Տերումո ֆիրմային ապրանքը, ինչպես 15.02.2021թ, այնպես էլ 06.04.2021թ տեխնիկական բնութագրերով:*

*3. «Մեգիէլ» ՍՊ ընկերության 07.05.2021թ ներկայացրած համեմատական-վերլուծությունը Պատվիրատուի կողմից ներկայացրած կայքերում առկա ինֆորմացիայից էր, իսկ այժմ Պատվիարտուն կարծես թե փորձում է այլ բան ներկայացնել:*

*07.05.2021թ կայացած նիստում կողմերը հայտարարեցին, որ այլ ապացույց ներկայացնելու անհրաժեշտություն չեն տեսնում, համարել բողոքի քննությունն ավարտված: Ինչպես նաև Դուք հայտարարեցիք, որ կողմերն իրենց վերապահված իրավունքներից օգտվել են լիարժեք, բողոքի քննությունը ենթակա է ավարտման այն նախապատրաստված է*

*որոշման հրապարակմանը: Ասվածից հետևություն ենք անում, որ այլևս ապացույցներ ներկայացնելու հնարավորությունը սպառվել են կողմերի համար:»:*

**3. <u>«Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.**

Բողոքներ քննող անձը 15.04.2021թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/5718-2021 գրությամբ դիմել է «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից 14.04.2021թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Պատվիրատուն 22.04.2021թ.-ին թիվ 08-216 գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

*«Ի պատասխան <<Մեգիէլ>> ՍՊԸ-ի կողմից ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/44 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետև՝ Ընթացակարգ) վերաբերյալ 14.04.2021թ. ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2021/30 ծածկագրով բողոքի, հայտնում ենք հետևյալը.*

*Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին կետը սահմանում է հետևյալը.*

*1. Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հետևյալ արժեքները, այն է՝*

*1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.*

*2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:*

*Օրենքի 13-րդ հոդվածը սահմանում է հետևյալը.*

*<< 1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով փարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:*

*2. Գնման առարկայի բնութագրերը՝*

*1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.*

*2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.*

*3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.*

*4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:*

*3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:*

*4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:*

*5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը: >>*

*Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն.*

*<<1. Ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:*

2. Գնումների գործընթացին որևէ երկրի ռեզիդենտ հանդիսացող անձի (անձանց) մասնակցությունը կարող է սահմանափակվել միայն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ, եթե դա անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության և պաշտպանության ապահովման համար:>>

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ կետը սահմանում է հետևյալը.

2. Արգելվում է խմբավորել առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները մեկ չափաբաժնում, բացառությամբ այն դեպքերի, երբ պատվիրատուն հիմնավորում է նման խմբավորման անհրաժեշտությունը:

ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգ>>-ի 22-րդ կետի համաձայն .

<<Գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ՝ բացառությամբ գնումը սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված հիմքով կատարելու դեպքերի>>

ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 4-րդ կետը սահմանում է.

Գնման գործընթացը հետևյալ գործընթացների (գործառույթների) ամբողջությունն է՝

1) գնումների պլանավորում.

2) գնման գործընթացի կազմակերպում (ներառյալ գնման առարկայի բնութագրերի հաստատումը).

3) պայմանագրի կնքում.

4) պայմանագրի կատարում և կառավարում:

Գնման գործընթացների շրջանակներում գնման առարկաների տեխնիկական բնութագրերը կազմելիս Պատվիրատուները չեն կարող հաշվի առնել աշխարհում բոլոր արտադրողների կողմից հնարավոր առաջարկները և բնութագրերը կազմել <<բոլոր հնարավոր առաջարկներին համապատասխանող>> սկզբունքով, քանի որ դա կենթադրի գրել միայն ապրանքի անունը և չբնութագրել այն: Ցանկացած բնութագրիչ պարամետր նշելով հնարավոր է որ որևիցէ մի արտադրանքի բնութագրերը սպացվեն հրավերով նախատեսվածին չհամապատասխանող: Պատվիրատուները պետք է գնման առարկաները բնութագրեն և գնում կատարեն իրենց կարիքին համապատասխան, հնարավորինս լիարժեք բնութագրելով ապրանքը, սակայն հաշվի առնելով Կարգի 22-րդ կետի պահանջները՝ այն է Տեխնիկական բնութագրերը կազմել այնպես, որ դրանց բավարարեն մեկից ավելի

*արտադրողներ և հնարավոր մասնակիցներ՝ դրանով իսկ ապահովելով տեխնիկական բնութագրերի ոչ խտրական լինելուն վերաբերող Օրենքի պահանջները:*

*Ինչպես արդեն նշել էինք նախորդ՝ ԳԲՔԱ-ԼՕ-2021/11 բողոքի շրջանակներում, սրտի վիրաբուժության ոլորտում կիրառվում են ապրանքներ, որոնց չափի և ձևի անհրաժեշտությունը (ընտրությունը) պարզվում է անմիջապես միջամտության ընթացքում, հետևաբար դրանց ծախսը և պահանջարկը ուղղակիորեն կապված է կոնկրետ մարդու ֆիզիկական տվյալներից: Այս առանձնահատկությունից ելնելով Պատվիրատուները չեն կարող ըստ առանձին չափերի և ձևերի կատարել հստակ քանակական կանխատեսումներ, ուստի և իրականացնել ճշգրիտ պլանավորում ծախսերի և եկամուտների նախահաշվի շրջանակներում: Հակառակ դեպքում պետք է անորոշ կամ չհիմնավորված շատ քանակներով իրականացվի պլանավորում բոլոր չափերի մասով, ինչը հանգեցնելու է տարեկան եկամուտների և ծախսերի նախահաշվի բացասական սալդոյի ձևավորմանը, երբ նույն եկամուտների պարագայում անհամաչափ մեծանալու է ծախսային բաղադրիչը: Նման իրավիճակը հակասում է Օենքով նախատեսված Պատվիրատուի կարիքին համապատասխան գնում կատարելու պահանջին: Այդպիսի ապրանքների մասով Պատվիրատուն իր բնականոն գործունեության ապահովման համար անհրաժեշտ ապրանքների պլանավորումն ու քանակների սահմանումն իրականացնում է նախորդ տարվա բժշկական միջամտությունների քանակի և դրանց ընթացքում իրականացված ապրանքների ըստ տեսակների ընդհանուր ծախսի հիման վրա: Այնուհետև, ունենալով պարտադիր նվազագույն քանակի անհրաժեշտ պահեստավորում, փաստացի ծախսերից ելնելով ապահովում դրանց լրացումը պահեստում: Այդպիսի առանձնահատկությունով է պայմանավորված հրավերով նախատեսված 1-ից 9-րդ և 11-ից 13-րդ չափաբաժիններում տարբեր չափեր և ձևեր ունեցող նմանատիպ ապրանքները նույն չափաբաժնում խմբավորելու փաստը: Անկանխատեսելիության մասով, որպես պաշտոնական պարզաբանում Ձեզ ենք տրամադրում ՀՀ ԱՆ նախարարի 22.07.2016թ. թիվ ԱՄ/06.1/8130-16 գրությունն ուղղված ՀՀ ֆինանսների նախարարին և ֆինանսների նախարարության պատասխանը ՀՀ Առողջապահության նախարարությանը: Միաժամանակ հարկ ենք համարում նշել, որ ստենտերի մասով առկա է նաև հետևյալ առանձնահատկությունը. հաճախ առաջանում է նույն անոթում մեկից ավելի ստենտ տեղադրելու անհրաժեշտություն, սակայն ոչ նույն չափի, և այդ իրավիճակում առավել որակյալ բժշկական օգնություն ցուցաբերելու նպատակով բժշկական ցուցումն է տեղադրել նույն դեղածածկով ստենտ: Սա իր հերթին բերում է այն պայմանին, որ պատվիրատուի մոտ պետք է առկա լինեն նույն դեղածածկով ստենտի բոլոր հնարավոր չափերից: Առանձին-առանձին ըստ չափերի*

*չափաբաժիններ առանձնացնելու դեպքում այդ անհրաժեշտ պայմանը հնարավոր է չապահովել, ինչը կհանգեցնի բժշկական ցուցումներին հակադարձող, ինչպես նաև առավել արդյունավետ բժշկական օգնություն ցուցաբերելուն հակասող իրավիճակների:*

*Պարզաբանում պահանջել չի նշանակում Պատվիրատուին պարտավորեցնել կատարելու փոփոխություններ հրավերում, այլ նշանակում է հրավերի շրջանակներում որոշակի հարցի վերաբերյալ ստանալ բացատրություններ, իսկ հրավերում փոփոխություններ կատարվում են, եթե ներկայացված հիմնավորումները ընդունելի են համարվում պատվիրատուի կողմից: Պատվիրատուն պարզաբանմամբ ներկայացրել է հստակ բացատրություն և իր դիրքորոշումը:*

*Ինչ վերաբերվում է 26.03.2021թ թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/11 բողոքի որոշման պահանջները Պատվիրատուի կողմից չկատարելուն, ներկայացնում ենք բողոքի ամփոփիչ մասը.*

*<<Բողոքի քննության ընթացքում բողոքաբերի և Պատվիրատու կողմից ներկայացված վերոնշյալ հանգամանքները համադրելով գործով ձեռք բերված ապացույցներին ու փաստական տվյալներին, ինչպես նաև դրանք դիտարկելով սույն որոշմամբ արված վերլուծությունների ու եզրահանգումների համատեքստում՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված իրավակարգավորման կիրառման համար՝ անկախ հիմնավոր լինելու կամ չլինելու և հիմնավորվածության աստիճանի (օբյեկտիվ հանգամանքներից ելնելով), Պատվիրատուն պետք է նախ և առաջ հաշվի առնի Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասով և Կարգի 22-րդ կետով նախատեսված դրույթները՝ հնարավոր մասնակիցների համար ապահովի մրցակցության հավասար պայմաններ, դրանով իսկ բացառելով գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացումը: Նշված դրույթների կիրառումն ապահովելուց հետո նոր միայն Պատվիրատուն կարող է առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները խմբավորել մեկ չափաբաժնում՝ հիմնավորելով խմբավորելու անհրաժեշտությունը, դրա օրինաչափությունն ու հիմնավորվածությունը՝ ելնելով օբյեկտիվ պատճառներից ու այլընտրանքային՝ առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաների տարբեր չափաբաժիններում ներառելու հնարավորության բացակայությունից:*

*Ուստի, վերը նշված եզրահանգումներով պայմանավորված՝ բողոքով ներկայացված հիմնավորումներով և վերլուծությամբ հրավերի 1-9-րդ չափաբաժիններում փոփոխություններ կատարելու մասին պահանջն ենթակա է բավարարման մասնակիորեն՝ հրավերի նշված չափաբաժինների մասով գնման առարկա հանդիսացող բնութագրերն ենթակա են փոփոխման սույն որոշմամբ նշված հիմքերով:*

*Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» « օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ « գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,*

*ՈՐՈՇԵՑ*

*«Սեգիէլ» ՍՊԸ-ի կողմից 01.03.2021թ-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2021/11 ծածկագրով բողոքը բավարարել մասնակիորեն:*

*Պարտավորեցնել «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/44» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին կատարել սույն որոշմամբ նշված փոփոխությունները: Փոփոխություն կատարելու անհնարինության դեպքում գնման ընթացակարգը՝ 1-9 չափաբաժինների մասով հայտարարել չկայացած:>>*

*Մասնակի բավարարելու էությունը հենց կայանում է նրանում, որ Բողոքը քննող անձը չի պարտավորեցրել Պատվիրատուին խմբավորված ապրանքները առանձնացնել առանձին չափաբաժինների, այլ պարտավորեցրել է տեխնիկական բնութագրերում կատարել այնպիսի փոփոխություն, որ ապահովվեն մեկից ավել արտադրողներ և մասնակիցներ:*

*Հրավերում ստենտերին վերաբերվող դեղի նյութի մասով հայտնում ենք, որ ցանկացած ապրանք, որն իր մեջ պարունակում է ինչ որ դեղամիջոց, անհրաժեշտ է բնութագրել նշելով այդ դեղի և հստակ անվանումը, և հստակ դոզաներ, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք նշելու դեպքում գնման առարկայի տեխնիկական բնութագրերը կհակասեն Կարգի 22-րդ կետի պահանջներին: Ընդ որում Օրենքի 13-րդ հոդվածի պահանջն է հնարավորինս լիարժեք և հստակ նկարագրել ապրանքը: Միայն Կարգի 22 կետի պահանջներով պայմանավորված Պատվիրատուն ստենտի դեղի նյութը չի նշել հրավերի 9-րդ չափաբաժնում: Իսկ 6-8-րդ չափաբաժիններում ներառված տեխնիկական բնութագրերը ապահովում են մեկից ավելի և արտադրող, և հնարավոր մասնակից: Հստակ դեղի նյութը նշելու փոխարեն դեղի խումբը նշելը հավասարազոր է ընդհանրապես այն չնշելուն, քանի որ բոլոր ստենտերի դեղի նյութերը բնականաբար պետք է լինեն անոթների բուժմանն ուղղված և պատկանեն նույն խմբին:*

*Ամփոփելով վերոգրյալը, գտնում ենք, որ Մասնակցի բողոքը հիմնավոր չէ:»:*

Պատվիրատուն 04.05.2021թ.-ին թիվ 08-233 գրությամբ ներկայացված դիրքորոշման լրացմամբ հայտնել է նաև հետևյալը.

*«Ի լրումն ԳԲՔԱ-ԼՕ-2021/30 ծածկագրով բողոքի շրջանակներում մեր ներկայացրած դիրքորոշման հայտնում ենք հետևյալը.*

*1. Համաձայն ԳԲՔԱ-ԼՕ-2021/11 բողոքի որոշման պահանջների Պատվիրատուն կատարելով փոփոխություններ ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/44 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերում ապահովել է ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ*

հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգ>>-ի 22-րդ կետի պայմանները և որպես ասվածի հիմնավորում տեղեկությունները ներկայացնում ենք ստորև աղուսյակի տեսքով.

| Չափաբաժնի համարը | Չափաբաժնի անվանումը | Հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերը | Նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանող բնութագրերով ապրանք արտադրողների և ապրանքային շարքի (մոդելի) անվանումները | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Կաթետր ախտորոշիչ | Կաթետրի նյութը նեյլոն կամ պոլիուրետան, կաթետրը օժտված է կաթետրերին հատուկ ամրությամբ և ռենտգենկոնտրաստությամբ: Նյութը ապահովում է կաթետրի ճկունությունը ըստ համապատասխան անոթի: Ունի չվնասող, ռենտգենկոնտրաստ դիստալ ծայր, կաթետրերի ներքին լուսանցք է՝ 4F; 5F; 6F, մաքսիմալ ճնշումը 1200psi, երկարությունը՝ ոչ պակաս քան 80սմ, ոչ ավել քան 125սմ: Արյան ծավալային հոսքի արագությունը ոչ պակաս քան 16,7 մլ/վ: Կաթետերի ծայրի ձևերը՝ JL 3,5; JL4; JL5; JL6; JR3,5; JR4; JR5; JR6; AL1; AL2; AL3; AR1; AR2; MPA2; IM; PIGTAIL; Պայմանագրի կատարման փուլում պետք է ներկայացվի ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչի կողմից տրված երաշխիքային նամակ: | Ջոնսոն և Ջոնսոն, INFINITY | Մերիթ Մեդիքալ, Performa | | https://www.cordis.com/en_us/cardiology/diagnose/infiniti-diagnostic-catheter.html<br><br>https://www.merit.com/cardiac-intervention/angiography/diagnostic-cardiology-catheters/performa-diagnostic-cardiology-catheter/#toggle-id-1-close |
| 2 | Կաթետր բալոն | Սրտանոթային բալոն-կաթետրներ RX տիպի, ռենտգենոկոնտրաստ նշանակիրներով, հիդրոֆիլիկ ծածկույթով, շաֆթը դիստալ, միջին և պրոքսիմալ մասերով: Բալոնի չափսերը՝ -տրամագիծը՝ 1,20մմ; 1,5մմ, երկարությունները՝ 8մմ, 12մմ, 15մմ, 20մմ; -տրամագիծը՝ 2,0մմ; 2,25մմ; 2,5մմ; 2,75մմ; | Բոստոն Սայենտիֆիկ, EMERGE | Էբբոտ, TREK | | https://www.bostonscientific.com/en-US/products/catheters--balloon/emerge-ptca-dilatation-catheter.html<br><br>https://www.cardiovascular.abbott/us/en/hcp/products/percutaneous-coronary-intervention/nc-trek-mini-coronary-dilation-catheters.html |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | 3,0մմ; 3,25մմ; 3,5մմ; 3,75մմ; 4,0մմ, երկարությունները՝ 8,0-30մմ միջակայքում ըստ արտադրողի բոլոր չափերը, սակայն ամենակարճը՝ ոչ ավել քան 8մմ, ամենաերկարը՝ ոչ պակաս քան 30մմ: Պայմանագրի կատարման փուլում պետք է ներկայացվի ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչի կողմից տրված երաշխիքային նամակ: | | | | |
| 3 | Կաթետր բալոն | Սրտանոթային բալոն-կաթետրերներ RX տիպի, ռենտգենոկոնտրաստ նշանակիրներով, հիդրոֆիլիկ ծածկույթով, շաֆթը դիստալ, միջին և պրոքսիմալ մասերով: Բալոնի չափսերը՝ -տրամագիծը՝ 1,20մմ; 1,5մմ, երկարությունները՝ 8մմ, 12մմ, 15մմ, 20մմ; -տրամագիծը՝ 2,0մմ; 2,25մմ; 2,5մմ; 2,75մմ; 3,0մմ; 3,25մմ; 3,5մմ; 3,75մմ; 4,0մմ, երկարությունները՝ 8,0-30մմ միջակայքում ըստ արտադրողի բոլոր չափերը, սակայն ամենակարճը՝ ոչ ավել քան 8մմ, ամենաերկարը՝ ոչ պակաս քան 30մմ: Պայմանագրի կատարման փուլում պետք է ներկայացվի ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչի կողմից տրված երաշխիքային նամակ: | Բոստոն Սայենտիֆիկ, EMERGE | Էբբոտ, TREK | | https://www.bostonscientific.com/en-US/products/catheters--balloon/emerge-ptca-dilatation-catheter.html https://www.cardiovascular.abbott/us/en/hcp/products/percutaneous-coronary-intervention/nc-trek-mini-coronary-dilation-catheters.html |
| 4 | Կաթետր բալոն | Սրտանոթային բալոն-կաթետրերներ RX տիպի, ռենտգենոկոնտրաստ նշանակիրներով, հիդրոֆիլիկ ծածկույթով, շաֆթը դիստալ, միջին և պրոքսիմալ մասերով: Բալոնի չափսերը՝ -տրամագիծը՝ 1,5մմ, երկարությունները՝ 15մմ, 20մմ;- | Բոստոն Սայենտիֆիկ, EMERGE | Տերումո, Ryujin | | https://www.bostonscientific.com/en-US/products/catheters--balloon/emerge-ptca-dilatation-catheter.html https://www.terumo-europe.com/en-emea/products/ryujin%E2%84%A2-plus-ptca-dilatation-catheter |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | տրամագիծը՝ 2,0մմ, երկարությունները՝ 15մմ, 20մմ, 30մմ;- տրամագիծը՝ 2,25; 2,5; 2,75; 3,0; 3,5; 4,0մմ, երկարությունները՝ 8,0-30մմ միջակայքում ըստ արտադրողի բոլոր չափերը, սակայն ամենակարճը՝ ոչ ավել քան 10մմ, ամենաերկարը՝ ոչ պակաս քան 30մմ: Պայմանագրի կապարման փուլում պետք է ներկայացվի ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչի կողմից տրված երաշխիքային նամակ: | | | | |
| 5 | Կաթետր բալոն | Կաթետր բալոն չընդլայնվող գնդանոթով հիդրոֆիլիկ ծածկույթով OTW տիպի: Տրամագծերը՝ 1.20-1,25; 1.5; 2.0; 2.5մմ, երկարությունը՝ 10-12; 15; 20մմ: Պայմանագրի կապարման փուլում պետք է ներկայացվի ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչի կողմից տրված երաշխիքային նամակ: | Տերումո, Ryujin | Էբբոտ, TREK | | https://www.terumo-europe.com/en-emea/products/ryujin%E2%84%A2-plus-ptca-dilatation-catheter https://www.cardiovascular.abbott/us/en/hcp/products/percutaneous-coronary-intervention/nc-trek-mini-coronary-dilation-catheters.html |
| 6 | Ստենտ դեղապատ | Դեղը Սիրոլիմուս, ստենտի նյութը կոբալտ-քրոմ, բաց դիզայն, դեղի դոզան ոչ ավելքան 3.9µg/mm, ճաղերի հաստությունը ոչ ավելքան 81 միկրոն, պոլիմերը բիոքայքայվող: Տրամագծերը՝ 2,25մմ, 2,5մմ, 2,75մմ, 3,0մմ, 3,5մմ, 4,0մմ: Երկարությունը՝ 8,0-40մմ միջակայքում ըստ արտադրողի բոլոր չափերը, սակայն ամենակարճը՝ ոչ ավել քան 9մմ, ամենաերկարը՝ ոչ պակաս քան 38մմ; Պայմանագրի կապարման փուլում պետք է ներկայացվի ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչի կողմից տրված երաշխիքային | Տերումո, Ultimaster | Մերիլ, Biomime | Կոնցեպտ Մեդիքալ, Ablumi nus Des | https://www.terumo-europe.com/en-emea/products/ultimaster%E2%84%A2-sirolimus-eluting-coronary-stent-system https://www.merillife.com/assets/pdfs/medical-devices/biomime-drug-eluting-coronary-stent-1611043578pdf.pdf https://www.conceptmedical.com/product/ablu minus-des/ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | նամակ: | | | | |
| 7 | Ստենտ դեղապատ | Դեղը էվերոլիմուս, ստենտի նյութը քրոմի համաձուլվածք, :Տրամագծերը՝ 2,25մմ, 2,5մմ, 2,75մմ, 3,0մմ, 3,5մմ, 4,0մմ: Երկարությունները՝ 2,25մմ տրամագծի դեպքում ամենակարճը ոչ ավել 8մմ, ամենաերկարը ոչ պակաս 28մմ և այդ միջակայքում ըստ արտադրողի բոլոր չափերը; 2,5-ից 4,0մմ տրամագծերի դեպքում ամենակարճը ոչ ավել 8մմ, ամենակարճը ոչ ավել 38մմ և այդ միջակայքում ըստ արտադրողի բոլոր չափերը: Պայմանագրի կատարման փուլում պետք է ներկայացվի ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչի կողմից տրված երաշխիքային նամակ: | Էբբոտ, Xience PRO | Բոստոն Սայենտիֆիկ, Promus Premier | | https://www.cardiovascular.abbott/int/en/hcp/products.html https://www.bostonscientific.com/en-US/products/stents--coronary/promus-premier-stent-system.html |
| 8 | Ստենտ դեղապատ | Դեղը էվերոլիմուս, ստենտի նյութը քրոմի համաձուլվածք, :Տրամագծերը՝ 2,25մմ, 2,5մմ, 2,75մմ, 3,0մմ, 3,5մմ, 4,0մմ: Երկարությունները՝ 2,25մմ տրամագծի դեպքում ամենակարճը ոչ ավել 8մմ, ամենաերկարը ոչ պակաս 28մմ և այդ միջակայքում ըստ արտադրողի բոլոր չափերը; 2,5-ից 4,0մմ տրամագծերի դեպքում ամենակարճը ոչ ավել 8մմ, ամենակարճը ոչ ավել 38մմ և այդ միջակայքում ըստ արտադրողի բոլոր չափերը: Պայմանագրի կատարման փուլում պետք է ներկայացվի ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչի կողմից տրված երաշխիքային նամակ: | Էբբոտ, Xience PRO | Բոստոն Սայենտիֆիկ, Promus Premier | | https://www.cardiovascular.abbott/int/en/hcp/products.html https://www.bostonscientific.com/en-US/products/stents--coronary/promus-premier-stent-system.html |
| 9 | Ստենտ դեղապատ երկար | Ստենտի նյութը քրոմի համաձուլվածք: Տրամագծերը - 2.5, 2.75, 3.0, 3.5 մմ, երկարությունը 48 մմ: Պայմանագրի | Էբբոտ, Xience Xpedition | Մերիլ, Biomime | | https://www.cardiovascular.abbott/int/en/hcp/products.html https://www.merillife.com/assets/pdfs/medical-devices/biomime-drug-eluting-coronary-stent-1611043578pdf.pdf |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | կապարման փուլում պետք է ներկայացվի ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչի կողմից տրված երաշխիքային նամակ: | Long | | | |
| 11 | Փական բիոլոգիա կան | Սրտի կարկասային հյուսվածքային փականային պրոթեզներ՝ աորտալ սուպրա-անուլյար, աորտալ ինտրա-անուլյար և միտրալ դիրքում տեղադրման համար: Պետք է լինի 19, 21, 23, 25, 27, 29, 31 և 33 մմ չափերի՝ ըստ պատվերի: Մշակված է հակակալցիֆիկացիոն Linx AC տեխնոլոգիայով, բաղկացած է միմյանց համադրած երեք առանձին խոզի փականների թերթիկներից: Փականի արտապար հատվածի եզրը ծածկված է պերիկարդե հավելյալ թերթիկով: Աորտալ ինտրա-անուլյար մոդելի 21, 23, 25, 27 և 29 մմ չափերի դեպքում պրոտրուզիան դեպի աորտա համապատասխանաբար կազմում է 9, 9, 10, 11 և 12մմ, աորտալ սուպրա-անուլյար 19, 21, 23, 25, 27 և 29մմ չափերի դեպքում՝ համապատասխանաբար 11, 11, 13, 13, 14 և 15մմ, և միտրալ 25, 27, 29, 31 և 33մմ չափերի դեպքում՝ պրոտրուզիան դեպի ձախ փորոք կազմում է համապատասխանաբար 9, 9, 10, 10 և 11մմ: Պարունակում է Սենթ Ջութ Էպիկ պոլիմերային FlexFit կարկաս: Պայմանագրի կապարման փուլում պետք է ներկայացվի ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչի կողմից տրված երաշխիքային նամակ: | Սենթ Ջութ մեդիք ալ, Էպիկ | | | https://www.cardiovascular.abbott/us/en/hcp/products/structural-heart/epic-tissue-valve.html |
| 12 | Փական բիոլոգիա կան | Սրտի աորտայի փականի բիոլոգիական միտրալ և աորտալ | Սենթ Ջութ մեդիք | Մեդտր ոնիկ, | | https://www.cardiovascular.abbott/us/en/hcp/products/structural-heart/epic-tissue-valve.html |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | պրոտեզ, խոզի պերիկարդից, աորտալ փականի չափսերը՝ 21, 23, 25, 27 և 29մմ ըստ պատվերի, միտրալ փականի չափսերը՝ 27, 29, 31 և 33մմ ըստ պատվերի: Պայմանագրի կապարման փուլում պետք է ներկայացվի ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչի կողմից տրված երաշխիքային նամակ: | ալ, Էպիկ | Hancock II | | [https://europe.medtronic.com/xd-en/healthcare-professionals/products/cardiovascular/heart-valves-surgical/hancock-ii-hancock-ii-ultra-bioprostheses.html](https://europe.medtronic.com/xd-en/healthcare-professionals/products/cardiovascular/heart-valves-surgical/hancock-ii-hancock-ii-ultra-bioprostheses.html) |
| 13 | Փական մեխանիկական ստանդարտ | Սրտի փականի մեխանիկական պրոտեզ աորտալ և միտրալ, աորտալ փականի չափսերը՝ 21, 23, 25 և 27 ըստ պատվերի, միտրալ փականի չափսերը՝ 27, 29, 31 և 33մմ ըստ պատվերի: Պայմանագրի կապարման փուլում պետք է ներկայացվի ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչի կողմից տրված երաշխիքային նամակ: | Սենթ Ջուդ մեդիքալ, Ռեգենտ, Մաստեր, | Sorin, Կարբո մեդիքս Ստանդարտ | | [https://www.cardiovascular.abbott/us/en/hcp/products/structural-heart/surgical-valve-solutions/masters-mechanical-valves.html](https://www.cardiovascular.abbott/us/en/hcp/products/structural-heart/surgical-valve-solutions/masters-mechanical-valves.html) [https://www.livanova.com/en-US/Home/Heart-Valves.aspx](https://www.livanova.com/en-US/Home/Heart-Valves.aspx) |

*2. Ինչ վերաբերվում է <<Մեգիէլ>> ՍՊԸ-ի այն դիրքորոշմանը, որ հրավերի տարբեր չափաբաժիններում ներառված գնման առարկայի տեխնիկական բնութագրերը նույնն են, ինչը <<պարակուսելի է>> վերջինիս համար, ապա նշենք, որ դա չի հակասում ՀՀ գնումների մասին օրենսդրության պահանջներին: Համաձայն <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջների.*

*<<1. Մրցակցային գնման ձևերի կիրառման ժամանակ առանձին բնութագրեր ունեցող գնումները մեկ գնման գործընթացի շրջանակներում կարող են բաժանվել չափաբաժինների: Արգելվում է՝*

*1) մեկ գնման առարկան բաժանել առանձին չափաբաժինների՝ մրցակցային գնման ձևի կիրառումից խուսափելու նպատակով.>>*

*Պատվիրատուն հայտարարել է բաց մրցույթ, որը հանդիսանում է նախընտրելի և մրցակցային գնման ձև:*

*3. Հրավերով սահմանված մատակարարման ժամկետների հետ կապված, հայտնում ենք հետևյալը.*

*Համաձայն ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 21-րդ կետի ը ենթակետի.*

*ը)կնքվելիք պայմանագրով ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման ժամկետը, իսկ փուլային ձևով պայմանագրի կատարման դեպքում՝ առաջին փուլի ժամկետը, որը չպետք պակաս լինի 20 օրացուցային օրից:*

*ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 523-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն.*

*<<2. Պայմանագրով մատակարարման փուլերի հետ մեկտեղ կարող է սահմանվել ապրանքների մատակարարման ժամանակացույց (տասնօրյա, ըստ օրերի, ժամերի և այլն):>>*

*Հրավերով նախատեսված 2.1.7.1 կետով Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝*

*բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:*

*Ընդ որում, վերոնշյալ կետով սահմանված օրերի քանակը նախատեսում է Պատվիրատուն:*

*Համադրելով վերը նշված կետերը, հանգում ենք այն եզրակացության, որ բողոքաբերի կողմից ապրանքի մատակարարման համար ընդունելի համարվող 15-20օր ժամանակահատվածը հրավերով արդեն իսկ սահմանված է և մասնակցի այն մտահոգությունը, թե 5 օրյա ժամկետի խախտումը կարող է հանգեցնել հնարավոր մասնակիցների գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցողների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելուն, անհիմն է:*

*Ինչ վերաբերում է բողոքաբերի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 437-րդ հոդվածի 6-րդ կետի վկայակոչմանը, ապա գտնում ենք որ սույն դրույթի նման կերպ մեկնաբանումը վերաբերելի չէ բողոքով ներկայացված պահանջին, քանի-որ տվյալ դեպքում բողոքաբերը հանդիսանում է գնման գործընթացի հնարավոր մասնակից, այլ ոչ թե պայմանագրի կողմ:*

*Վերոնշյալ կետի մեջբերումն ընդամենը ապացուցում է այն իրողությունը, որ ինչպես նախկինում, այնպես էլ ներկայում, պատվիրատուն նման մատակարարման պայմաններով հայտարարել է գնման ընթացակարգեր, որին մասնակցություն են ունեցել տարբեր մասնակիցներ, այդ թվում նաև բողոքաբեր ընկերությունը, որով փաստվում է այն հանգամանքը, որ տվյալ պայմանն ընդունելի է և հանդիսանում է գործարար շրջանառության սովորույթ:*

*Բժշկական կենտրոնի գործունեության նպատակը կենտրոն դիմած բուժառուների ժամանակին, պատշաճ որակով բժշկական ծառայությունների մատուցումն է, ուստի*

*պատվիրատուն գնման գործընթաց նախաձեռնելիս պարտավոր է գնումների մասին օրենսդրության պահանջների պահպանմանը զուգահեռ ապահովել նաև իր անմիջական գործունեությունից բխող պահանջների պահպանում:*

*ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն ձեռնարկատիրական է համարվում անձի ինքնուրույն, իր ռիսկով իրականացվող գործունեությունը, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է:*

*Պատվիրատուն իր գործունեության ընթացքում ապրանքների առանձնահատկությամբ պայմանավորված ապահովում է դրանց հնարավորինս բավարար քանակների պահեստավորում: Այդ ապրանքների պատվերները մատակարարներին չեն ներկայացվում անմիջապես միջամտության ընթացքում, այլ միայն փաստացի սպառումից հետո ունենալով ծախսի պատկեր, պատվիրատուն անմիջապես ներկայացնում է պատվեր մատակարարներին՝ փորձելով լրացնել իր անհրաժեշտ պահեստային քանակները: Նշված քանակները չվերականգնելու դեպքում կարող է ստեղծվել իրավիճակ, երբ կենտրոն դիմած բուժառուի համար պահեստում առկա չլինի անհրաժեշտ չափի և ձևի ապրանք: Դրանով է պայմանավորված մատակարարման նման ժամկետի սահմանումը: Հաշվի առնելով նշված առանձնահատկությունները բոլոր մատակարարները, այդ թվում նաև բողոքաբերը, կենտրոնի հետ միշտ համագործակցել են նման մատակարարման պայմանով:*

*Ինչ վերաբերում է բեռնափոխադրման և մաքսազերծման հետ կապված ժամկետների մասով բողոքաբերի կողմից որոշ ընկերությունների ուղղված հարցումներին և վերջիններիս կողմից տրամադրված պատասխաններին, ապա այդ պատասխաններում պատվիրատուն չարձանագրեց որևէ հստակ ժամկետ, իսկ միջակայքերով նշված ժամկետները /3-7 աշխատանքային օր/ չեն հակասում հրավերում նշված ժամկետներին: Պատվիրատուի կողմից նման ժամկետ սահմանելը ինքնանպատակ չէ և այն պայմանավորված է իր գործունեությամբ և իր կարիքին համապատասխան գնման առարկայի ձեռքբերմամբ: Գնման գործընթաց նախաձեռնելիս պատվիրատուն չի կարող սահմանել այնպիսի պայմաններ, որոնք ընդունելի կլինեն հնարավոր բոլոր մասնակիցների համար՝ նման պահանջ օրենսդրությամբ նախատեսված չէ:»:*

Պատվիրատուն 10.05.2021թ.-ին թիվ 08-448 գրությամբ ներկայացված դիրքորոշման մեկ այլ լրացմամբ հայտնել է նաև հետևյալը.

*«Ի պատասխան <<Մեգիէլ>> ՍՊԸ-ի կողմից 07.05.2021թ. ներկայացրած ի լրումն բողոքի, Ձեզ ենք տրամադրում տեղեկություններ Մասնակցի գրությամբ որպես անհամապատասխանություններ ներկայացված ցուցանիշների մասով.*

*-1-ին չափաբաժնով ներկայացնում ենք նաև Հայաստանի Հանրապետությունում Մերիթ Մեդիքլ Ընկերության դիստրիբյուտորի՝ <<Պրոֆտեստ>> ՍՊԸ կողմից նախկինում՝ 04.03.2021թ. տրամադրած առաջարկը, որտեղ հստակ երևում է Performa ախտորոշիչ կաթետրերի համար արյան հոսքի թողունակությունը՝ 17մլ, ինչը ապահովում է հրավերի նվազագույն պահանջը (ոչ պակաս, քան 16.7մլ)*

*-2-րդ, 3-րդ և 5-րդ չափաբաժիններում Էբբոտ ընկերության ինտերնետային կայքում նշվում է <<TREK & MINI TREK CORONARY DILATATION KATATERS>> և դրանք հանդիսանում են նույն ապրանքային շարքը:*

*-6-րդ չափաբաժնի մասով Մերիլ, Biomime ստենտի ճաղերի հաստությունը 65 միկրոն է և այդ ցուցանիշը հստակ առկա է կայքի հղմամբ տեխնիկական տվյալների 1-ին էջում 2-րդ տողով. <<Struk Thickness 65μm (0.065mm or 0.026">> : Հրավերում տվյալ ցուցանիշի պահանջը հենց 81 միկրոն չէ, այլ հետևյալը. << ճաղերի հաստությունը ոչ ավել քան 81 միկրոն:*

*- 7 և 8-րդ չափաբաժինների մասով, ներկայացված Էբբոտ Ընկերության Xience Pro ստենտի երկարությունը վերջանում է 28մմ-ով միայն 2.25մմ տրամագծի դեպքում, իսկ 2.5-ից 4.0մմ տրամագծերի դեպքում այն ունի 38մմ երկարություն, ինչը բավարարում է հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերին: Որպես ապացույց կից տրամադրում ենք պահեստում փաստացի առկա ապրանքի լուսանկար:*

*Սույն գրությամբ բողոքաբերի ի լրումն ներկայացված գրության մնացած հարցերով բանավոր դիրքորոշում ներկայացվել է 07.05.2021թ հրավիրված բողոքի քննության նիստի ընթացքում:»:*

**4. <u>Ընթացակարգի կողմ՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը.</u>**

Ընթացակարգի քննության ընթացքում, Մասնակցի 19.04.2021թ.-ի միջնորդության հիման վրա, Բողոքներ քննող անձի 26.04.2021թ.-ի թիվ /ԲՔԱ-ԼՕ/1/6340-2021 գրությամբ՝ որպես կողմ է ներգրավվել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը (այսուհետ նաև՝ Գրասենյակ):

Գրասենյակը, լինելով պատշաճ ծանուցված կայանալիք նիստի տեղի, օրվա և ժամի մասին, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը հրավիրված նիստերին:

Գրասենյակի ներկայացուցիչը, ներկայանալով հրավիրված նիստին, ներկայացրել է բանավոր դիրքորոշում՝ անդրադարձ կատարելով «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/44» ծածկագրով

հայտարարված գնման ընթացակարգին, նախաձեռնված ընթացակարգի իրավական և փաստական հանգամանքներին:

**5. <u>Ընթացակարգի կողմ՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը.</u>**

Ընթացակարգի քննության ընթացքում, Մասնակցի 19.04.2021թ.-ի միջնորդության հիման վրա, Բողոքներ քննող անձի 26.04.2021թ.-ի թիվ Ն/ԲՔԱ-ԼՕ/1/9399-2021 գրությամբ՝ որպես կողմ է ներգրավվել ՀՀ ֆինանսների նախարարությունը:

Նախարարությունը, պատշաճ ծանուցված լինելով կայանալիք նիստի տեղի, օրվա և ժամի մասին, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը հրավիրված նիստերին:

29.04.2021թ.-ին ներկայացված թիվ Ն/1.2/9943-2021 գրությամբ նախարարությունը հայտնել է, որ «Գնումների մասին» օրենքով սպառիչ սահմանված են ՀՀ ֆինանսների նախարարության՝ որպես գնումների մասին օրենսդրությամբ նախատեսված «լիազորված մարմնի», լիազորությունները, համապատասխան հարաբերություններում հանդես գալու շրջանակը և այլն: Նկատի ունենալով վերոգրյալը, ինչպես նաև սահմանված կարգավորումները և սահմանափակումները՝ հայտնում ենք կոնկրետ գնման գործընթացի շրջանակում բերված բողոքի քննությանը նախարարության ներկայացուցչի մասնակցությունը հնարավոր չենք համարում:

**6. <u>Ընթացակարգի կողմ՝ ՀՀ առողջապահության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը.</u>**

Ընթացակարգի քննության ընթացքում, Մասնակցի 19.04.2021թ.-ի միջնորդության հիման վրա, Բողոքներ քննող անձի 26.04.2021թ.-ի թիվ /ԲՔԱ-ԼՕ/1/6344-2021 գրությամբ՝ որպես կողմ է ներգրավվել ՀՀ առողջապահության նախարարությունը:

Նախարարությունը, պատշաճ ծանուցված լինելով կայանալիք նիստի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացրել գրավոր դիրքորոշում, ինչպես նաև չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը հրավիրված նիստերին:

**7. <u>Ընթացակարգի կողմ՝ Երևանի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը.</u>**

Ընթացակարգի քննության ընթացքում, Մասնակցի 19.04.2021թ.-ի միջնորդության հիման վրա, Բողոքներ քննող անձի 26.04.2021թ.-ի թիվ /ԲՔԱ-ԼՕ/1/6342-2021 գրությամբ՝ որպես կողմ է ներգրավվել Երևանի քաղաքապետարանը:

Քաղաքապետարանը, պատշաճ ծանուցված լինելով կայանալիք նիստի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացրել գրավոր դիրքորոշում, ինչպես նաև չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը հրավիրված նիստերին:

**8. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2021/30 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով 15.02.2021թ.-ին հայտարարվել է «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/44» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Մրցույթ կամ Ընթացակարգ):

ii. www.gnumner.am կայքում 06.04.2021թ.-ին հրապարակվել է «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/44» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի փոփոխության մասին հայտարարություն:

iii. Ընթացակարգի հրավերի հավելված 6-ով՝ պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով (այսուհետ նաև՝ Հավելված 1) 1-ից 9-րդ և 11-ից 13-րդ չափաբաժինների մասով սահմանվել է հետևյալը.

1-ին չափաբաժնի համար՝ ապրանքի անվանումը և ապրանքային նշանը սահմանվել է *«Կաթետր ախտորոշիչ»*: Վերջինիս տեխնիկական բնութագիրը սահմանվել է՝ *«Կաթետրի նյութը նեյլոն կամ պոլիուրետան, կաթետրը օժտված է կաթետերին հատուկ ամրությամբ և ռենտգենկոնտրաստությամբ: Նյութը ապահովում է կաթետրի ճկունությունը ըստ համապասխան անոթի: Ունի չվնասող, ռենտգենկոնտրաստ դիստալ ծայր, կաթետերի ներքին լուսանցք է՝ 4F; 5F; 6F, մաքսիմալ ճնշումը 1200psi, երկարությունը՝ ոչ պակաս քան 80սմ, ոչ ավել քան 125սմ: Արյան ծավալային հոսքի արագությունը ոչ պակաս քան 16,7 մլ/վ: Կաթետերի ծայրի ձևերը՝ JL 3,5; JL4; JL5; JL6; JR3,5; JR4; JR5; JR6; AL1; AL2; AL3; AR1; AR2; MPA2; IM; PIGTAIL; Պայմանագրի կատարման փուլում պետք է ներկայացվի ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչի կողմից տրված երաշխիքային նամակ:»*: Արտադրողի և ապրանքային նշանի անվանում չի նշվել: 2021թ.ի գնման պլանով նախատեսված ընդհանուր քանակը նշվել է 2000 հատ:

2-րդ չափաբաժնի համար՝ 1-ին չափաբաժնի համար՝ ապրանքի անվանումը և ապրանքային նշանը սահմանվել է *«Կաթետր բալոն»*: Վերջինիս տեխնիկական բնութագիրը սահմանվել է՝ *«Սրտանոթային բալոն-կաթետրներ RX տիպի, ռենտգենոկոնտրաստ նշանակիրներով, հիդրոֆիլիկ ծածկույթով, շաֆթը դիստալ, միջին և պրոքսիմալ մասերով: Բալոնի չափսերը՝ -տրամագիծը՝ 1,20մմ; 1,5մմ, երկարությունները՝ 8մմ, 12մմ, 15մմ, 20մմ; -տրամագիծը՝ 2,0մմ; 2,25մմ; 2,5մմ; 2,75մմ; 3,0մմ; 3,25մմ; 3,5մմ; 3,75մմ; 4,0մմ, երկարությունները՝ 8,0-30մմ միջակայքում ըստ արտադրողի բոլոր չափերը, սակայն ամենակարճը՝ ոչ ավել քան 8մմ, ամենաերկարը՝ ոչ պակաս քան 30մմ: Պայմանագրի կապարման փուլում պետք է ներկայացվի ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչի կողմից տրված երաշխիքային նամակ:»:* Արտադրողի և ապրանքային նշանի անվանում չի նշվել: 2021թ.ի գնման պլանով նախատեսված ընդհանուր քանակը նշվել է 150 հատ:

3-րդ չափաբաժնի համար՝ 1-ին չափաբաժնի համար՝ ապրանքի անվանումը և ապրանքային նշանը սահմանվել է *«Կաթետր բալոն»*: Վերջինիս տեխնիկական բնութագիրը սահմանվել է՝ *«Սրտանոթային բալոն-կաթետրներ RX տիպի, ռենտգենոկոնտրաստ նշանակիրներով, հիդրոֆիլիկ ծածկույթով, շաֆթը դիստալ, միջին և պրոքսիմալ մասերով: Բալոնի չափսերը՝ -տրամագիծը՝ 1,20մմ; 1,5մմ, երկարությունները՝ 8մմ, 12մմ, 15մմ, 20մմ; -տրամագիծը՝ 2,0մմ; 2,25մմ; 2,5մմ; 2,75մմ; 3,0մմ; 3,25մմ; 3,5մմ; 3,75մմ; 4,0մմ, երկարությունները՝ 8,0-30մմ միջակայքում ըստ արտադրողի բոլոր չափերը, սակայն ամենակարճը՝ ոչ ավել քան 8մմ, ամենաերկարը՝ ոչ պակաս քան 30մմ: Պայմանագրի կապարման փուլում պետք է ներկայացվի ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչի կողմից տրված երաշխիքային նամակ::»:* Արտադրողի և ապրանքային նշանի անվանում չի նշվել: 2021թ.ի գնման պլանով նախատեսված ընդհանուր քանակը նշվել է 50 հատ:

4-րդ չափաբաժնի համար՝ 1-ին չափաբաժնի համար՝ ապրանքի անվանումը և ապրանքային նշանը սահմանվել է *«Կաթետր բալոն»*: Վերջինիս տեխնիկական բնութագիրը սահմանվել է՝ *«Սրտանոթային բալոն-կաթետրներ RX տիպի, ռենտգենոկոնտրաստ նշանակիրներով, հիդրոֆիլիկ ծածկույթով, շաֆթը դիստալ, միջին և պրոքսիմալ մասերով: Բալոնի չափսերը՝ -տրամագիծը՝ 1,5մմ, երկարությունները՝ 15մմ, 20մմ; -տրամագիծը՝ 2,0մմ, երկարությունները՝ 15մմ, 20մմ, 30մմ; -տրամագիծը՝ 2,25; 2,5; 2,75; 3,0; 3,5; 4,0մմ, երկարությունները՝ 8,0-30մմ միջակայքում ըստ արտադրողի բոլոր չափերը, սակայն ամենակարճը՝ ոչ ավել քան 10մմ, ամենաերկարը՝ ոչ պակաս քան 30մմ: Պայմանագրի կապարման փուլում պետք է ներկայացվի ապրանքն արտադրողից կամ վերջինիս*

*ներկայացուցչի կողմից տրված երաշխիքային նամակ::»:* Արտադրողի և ապրանքային նշանի անվանում չի նշվել: 2021թ.ի գնման պլանով նախատեսված ընդհանուր քանակը նշվել է 400 հատ:

5-րդ չափաբաժնի համար՝ 1-ին չափաբաժնի համար՝ ապրանքի անվանումը և ապրանքային նշանը սահմանվել է *«Կաթետր բալոն»*: Վերջինիս տեխնիկական բնութագիրը սահմանվել է՝ *«Կաթետր բալոն չընդլայնվող գնդանոթով հիդրոֆիլիկ ծածկույթով OTW տիպի: Տրամագծերը՝ 1.20-1,25; 1.5; 2.0; 2.5մմ, երկարությունը՝ 10-12; 15; 20մմ: Պայմանագրի կատարման փուլում պետք է ներկայացվի ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչի կողմից տրված երաշխիքային նամակ:»:* Արտադրողի և ապրանքային նշանի անվանում չի նշվել: 2021թ.ի գնման պլանով նախատեսված ընդհանուր քանակը նշվել է 20 հատ:

6-րդ չափաբաժնի համար՝ 1-ին չափաբաժնի համար՝ ապրանքի անվանումը և ապրանքային նշանը սահմանվել է *«Ստենտ դեղապատ»*: Վերջինիս տեխնիկական բնութագիրը սահմանվել է՝ *«Դեղը Սիրոլիմուս, ստենտի նյութը կոբալտ-քրոմ, բաց դիզայն, դեղի դոզան ոչ ավելքան 3.9μg/mm, ճաղերի հաստությունը ոչ ավելքան 81 միկրոն, պոլիմերը բիոքայքայվող: Տրամագծերը՝ 2,25մմ, 2,5մմ, 2,75մմ, 3,0մմ, 3,5մմ, 4,0մմ: Երկարությունը՝ 8,0-40մմ միջակայքում ըստ արտադրողի բոլոր չափերը, սակայն ամենակարճը՝ ոչ ավել քան 9մմ, ամենաերկարը՝ ոչ պակաս քան 38մմ; Պայմանագրի կատարման փուլում պետք է ներկայացվի ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչի կողմից տրված երաշխիքային նամակ:»:* Արտադրողի և ապրանքային նշանի անվանում չի նշվել: 2021թ.ի գնման պլանով նախատեսված ընդհանուր քանակը նշվել է 400 հատ:

7-րդ չափաբաժնի համար՝ 1-ին չափաբաժնի համար՝ ապրանքի անվանումը և ապրանքային նշանը սահմանվել է *«Ստենտ դեղապատ»*: Վերջինիս տեխնիկական բնութագիրը սահմանվել է՝ *«Դեղը էվերոլիմուս, ստենտի նյութը քրոմի համաձուլվածք, :Տրամագծերը՝ 2,25մմ, 2,5մմ, 2,75մմ, 3,0մմ, 3,5մմ, 4,0մմ: Երկարությունները՝ 2,25մմ տրամագծի դեպքում ամենակարճը ոչ ավել 8մմ, ամենաերկարը ոչ պակաս 28մմ և այդ միջակայքում ըստ արտադրողի բոլոր չափերը; 2,5-ից 4,0մմ տրամագծերի դեպքում ամենակարճը ոչ ավել 8մմ, ամենակարճը ոչ ավել 38մմ և այդ միջակայքում ըստ արտադրողի բոլոր չափերը: Պայմանագրի կատարման փուլում պետք է ներկայացվի ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչի կողմից տրված երաշխիքային նամակ:»:* Արտադրողի և ապրանքային նշանի անվանում չի նշվել: 2021թ.ի գնման պլանով նախատեսված ընդհանուր քանակը նշվել է 200 հատ:

8-րդ չափաբաժնի համար՝ 1-ին չափաբաժնի համար՝ ապրանքի անվանումը և ապրանքային նշանը սահմանվել է *«Ստենտ դեղապատ»*: Վերջինիս տեխնիկական բնութագիրը սահմանվել է՝ *«Դեղը էվերոլիմուս, ստենտի նյութը քրոմի համաձուլվածք, :Տրամագծերը՝ 2,25մմ, 2,5մմ, 2,75մմ, 3,0մմ, 3,5մմ, 4,0մմ: Երկարությունները՝ 2,25մմ տրամագծի դեպքում ամենակարճը ոչ ավել 8մմ, ամենաերկարը ոչ պակաս 28մմ և այդ միջակայքում ըստ արտադրողի բոլոր չափերը; 2,5-ից 4,0մմ տրամագծերի դեպքում ամենակարճը ոչ ավել 8մմ, ամենակարճը ոչ ավել 38մմ և այդ միջակայքում ըստ արտադրողի բոլոր չափերը: Պայմանագրի կատարման փուլում պետք է ներկայացվի ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչի կողմից տրված երաշխիքային նամակ:»:* Արտադրողի և ապրանքային նշանի անվանում չի նշվել: 2021թ.ի գնման պլանով նախատեսված ընդհանուր քանակը նշվել է 150 հատ:

9-րդ չափաբաժնի համար՝ 1-ին չափաբաժնի համար՝ ապրանքի անվանումը և ապրանքային նշանը սահմանվել է *«Ստենտ դեղապատ երկար»*: Վերջինիս տեխնիկական բնութագիրը սահմանվել է՝ *«Ստենտի նյութը քրոմի համաձուլվածք: Տրամագծերը - 2.5, 2.75, 3.0, 3.5 մմ, երկարությունը 48 մմ: Պայմանագրի կատարման փուլում պետք է ներկայացվի ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչի կողմից տրված երաշխիքային նամակ:»:* Արտադրողի և ապրանքային նշանի անվանում չի նշվել: 2021թ.ի գնման պլանով նախատեսված ընդհանուր քանակը նշվել է 12 հատ:

11-րդ չափաբաժնի համար՝ 1-ին չափաբաժնի համար՝ ապրանքի անվանումը և ապրանքային նշանը սահմանվել է *«Փական բիոլոգիական»*: Վերջինիս տեխնիկական բնութագիրը սահմանվել է՝ *«Սրտի կարկասային հյուսվածքային փականային պրոտեզներ՝ աորտալ սուպրա-անուլյար, աորտալ ինտրա-անուլյար և միտրալ դիրքում տեղադրման համար: Պետք է լինի 19, 21, 23, 25, 27, 29, 31 և 33 մմ չափսերի՝ ըստ պատվերի: Մշակված է հակակալցիֆիկացիոն Linx AC տեխնոլոգիայով, բաղկացած է միմյանց համադրած երեք առանձին խոզի փականների թերթիկներից: Փականի արտապար հատվածի եզրը ծածկված է պերիկարդե հավելյալ թերթիկով: Աորտալ ինտրա-անուլյար մոդելի 21, 23, 25, 27 և 29 մմ չափսերի դեպքում պրոտրուզիան դեպի աորտա համապատասխանաբար կազմում է 9, 9, 10, 11 և 12մմ, աորտալ սուպրա-անուլյար 19, 21, 23, 25, 27 և 29մմ չափսերի դեպքում՝ համապատասխանաբար 11, 11, 13, 13, 14 և 15մմ, և միտրալ 25, 27, 29, 31 և 33մմ չափսերի դեպքում՝ պրոտրուզիան դեպի ձախ փորոք կազմում է համապատասխանաբար 9, 9, 10, 10 և 11մմ: Պարունակում է պոլիմերային FlexFit կարկաս: Պայմանագրի կատարման փուլում պետք է ներկայացվի ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչի կողմից տրված*

*երաշխիքային նամակ:»:* Արտադրողի և ապրանքային նշանի անվանում չի նշվել: 2021թ.ի գնման պլանով նախատեսված ընդհանուր քանակը նշվել է 15 հատ:

12-րդ չափաբաժնի համար՝ 1-ին չափաբաժնի համար՝ ապրանքի անվանումը և ապրանքային նշանը սահմանվել է *«Փական բիոլոգիական»*: Վերջինիս տեխնիկական բնութագիրը սահմանվել է՝ *«Սրտի աորտայի փականի բիոլոգիական միտրալ և աորտալ պրոթեզ, խոզի պերիկարդից, աորտալ փականի չափսերը՝ 21, 23, 25, 27 և 29մմ ըստ պատվերի, միտրալ փականի չափսերը՝ 27, 29, 31 և 33մմ ըստ պատվերի: Պայմանագրի կատարման փուլում պետք է ներկայացվի ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչի կողմից տրված երաշխիքային նամակ:»:* Արտադրողի և ապրանքային նշանի անվանում չի նշվել: 2021թ.ի գնման պլանով նախատեսված ընդհանուր քանակը նշվել է 10 հատ:

13-րդ չափաբաժնի համար՝ 1-ին չափաբաժնի համար՝ ապրանքի անվանումը և ապրանքային նշանը սահմանվել է *«Սրտի փականի մեխանիկական պրոթեզ աորտալ և միտրալ, աորտալ փականի չափսերը՝ 21, 23, 25 և 27 ըստ պատվերի, միտրալ փականի չափսերը՝ 27, 29, 31 և 33մմ ըստ պատվերի: Պայմանագրի կատարման փուլում պետք է ներկայացվի ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչի կողմից տրված երաշխիքային նամակ:»:* Արտադրողի և ապրանքային նշանի անվանում չի նշվել: 2021թ.ի գնման պլանով նախատեսված ընդհանուր քանակը նշվել է 15 հատ:

iv. Հավելված 1-ով սահմանվել է նաև ընդհանուր պայմաններ, համաձայն որի՝ ապրանքի տեխնիկական բնութագրերում ներառված չափերից (տրամագիծ և երկարություն) բացի, ըստ արտադրողի այլ չափերի առկայության դեպքում, եթե Մասնակիցը համաձայն է մատակարարել նաև դրանք, կարող է Ապրանքի ամբողջական նկարագրով ներկայացնել նաև այդ չափերը, որոնք կներառվեն կնքվելիք պայմանագրում: Ընդ որում, սույն պայմանը չի նշանակում հրավերի տեխնիկական բնութագրերով ներկայացված չափերից որևէ մեկի փոխարինում այլ չափով, կամ դրա բացակայություն:

Մատակարարման ժամկետները և քանակները. Պայմանագրի շրջանակներում Ապրանքի մատակարարումն իրականացվելու է 2021թ. տարվա ընթացքում, ըստ փաստացի պատվերների, ընդ որում յուրաքանչյուր պատվերի առավելագույն քանակը չի կարող լինել ավելի պայմանագրի ընդհանուր քանակի 1/2-ից, եթե դրան համաձայն չէ Վաճառողը: Առաջին խմբաքանակի մատակարարումը Գնորդը չի կարող պահանջել պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացուցային օրից շուտ, եթե դրան համաձայն չէ Վաճառողը: Այնուհետև, մատակարարումները պետք է իրականացվեն ըստ փաստացի պատվերների՝ ոչ ուշ քան 5 աշխատանքային օրվա ընթացքում:

Փաստացի կարիքից ելնելով նախատեսված քանակները կարող են ամբողջությամբ չպատվիրվել Պատվիրատուի կողմից և այդ մասով պայմանագիրը համարվում է լուծված հաշվարկային տարվա ավարտով: Մատակարարվող ապրանքները պետք է լինեն նոր, գործարանային փաթեթավորմամբ, պիտանելիության ժամկետները՝ հանձնման պահին առնվազն 75%-ը, բացառությամբ այն դեպքերի, երբ Պատվիրատուն կարիքից ելնելով համաձայնում է ընդունել ավելի կարճ ժամկետով ապրանք:

Ապրանքի մատակարարումը՝ բեռնափոխադրումը, բեռնաթափումը և տեղափոխումը մինչև համապատասխան պահեստ, իրականացվում է Կատարողի ուժերով և միջոցներով ք. Երևան, Արմենակյան 108/4 հասցեով:

## 9. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից 14.04.2021թ.-ին ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա բավարարման մասնակիորեն, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան

ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի,

ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 21-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ ... կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է գնման առարկայի բնութագրերը: Ապրանքների գնման դեպքում նշվում է նաև մասնակցի կողմից առաջարկվող ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման անհրաժեշտությունը, իսկ պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտությունը, եթե դրանք կիրառելի են տվյալ ապրանքի համար: Ընդ որում, պայմանագրի կատարման փուլում այն կնքած մասնակցից ծագման երկրի սերտիֆիկատ չի պահանջվում:

Կարգի 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ...:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված ցանկացած պահանջ պետք է ապահովի մրցակցության հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար, օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Տեխնիկական բնութագրով սահմանված այն չափորոշիչների մասով, որոնք պարունակում են հղում ապրանքային նշանին, սահմանված պետք է լինի «կամ համարժեք» արտահայտությունը:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Բողոքներ քննող անձն փաստում է նաև, որ Ընթացակարգի գնման առարկայի բնութագրերն ամբողջությամբ և հստակ պետք է նկարագրեն ձեռքբերվող ապրանքի հատկանիշները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը, հնարավոր մասնակիցների համար պետք է ապահովեն մրցակցության հավասար պայմաններ, դրանով իսկ բացառելով գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացումը: Ինչպես նաև բնութագիրն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք պետք է լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով հայտարարվել է Ընթացակարգը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով 15.02.2021թ.-ին հայտարարված «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/44» ծածկագրով բաց մրցույթի 06.04.2021թ.-ին փոփոխված հրավերի հավելված 6-ով՝ պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով 1-ից 9-րդ և 11-ից 13-րդ չափաբաժինների մասով սահմանվել է ապրանքի անվանումը, տեխնիկական բնութագիրը և 2021թ.-ի գնման պլանով նախատեսված ընդհանուր քանակը՝ յուրաքանչյուր չափաբաժնի համար անհատապես, արտադրողի և ապրանքային նշանի անվանում չի սահմանվել: Ինչպես նաև նույն հավելված 1-ով սահմանվել է ընդհանուր պայմաններ, առ այն, որ ապրանքի տեխնիկական բնութագրերում ներառված չափերից (տրամագիծ և երկարություն) բացի, ըստ արտադրողի այլ չափերի առկայության դեպքում, եթե Մասնակիցը համաձայն է մատակարարել նաև դրանք, կարող է Ապրանքի

ամբողջական նկարագրով ներկայացնել նաև այդ չափերը, որոնք կներառվեն կնքվելիք պայմանագրում: Ընդ որում, սույն պայմանը չի նշանակում հրավերի տեխնիկական բնութագրերով ներկայացված չափերից որևէ մեկի փոխարինում այլ չափով, կամ դրա բացակայություն: Մատակարարման ժամկետները և քանակները. Պայմանագրի շրջանակներում Ապրանքի մատակարարումն իրականացվելու է 2021թ. տարվա ընթացքում, ըստ փաստացի պատվերների, ընդ որում յուրաքանչյուր պատվերի առավելագույն քանակը չի կարող լինել ավելի պայմանագրի ընդհանուր քանակի 1/2-ից, եթե դրան համաձայն չէ Վաճառողը: Առաջին խմբաքանակի մատակարարումը Գնորդը չի կարող պահանջել պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացուցային օրից շուտ, եթե դրան համաձայն չէ Վաճառողը: Այնուհետև, մատակարարումները պետք է իրականացվեն ըստ փաստացի պատվերների՝ ոչ ուշ քան 5 աշխատանքային օրվա ընթացքում: Փաստացի կարիքից ելնելով նախատեսված քանակները կարող են ամբողջությամբ չպատվիրվել Պատվիրատուի կողմից և այդ մասով պայմանագիրը համարվում է լուծված հաշվարկային տարվա ավարտով: Մատակարարվող ապրանքները պետք է լինեն նոր, գործարանային փաթեթավորմամբ, պիտանելիության ժամկետները՝ հանձնման պահին առնվազն 75%-ը, բացառությամբ այն դեպքերի, երբ Պատվիրատուն կարիքից ելնելով համաձայնում է ընդունել ավելի կարճ ժամկետով ապրանք: Ապրանքի մատակարարումը՝ բեռնափոխադրումը, բեռնաթափումը և տեղափոխումը մինչև համապատասխան պահեստ, իրականացվում է Կատարողի ուժերով և միջոցներով ք. Երևան, Արմենակյան 108/4 հասցեով:

Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝ … բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները:

Վկայակոչված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքի քննությունը հարուցում և իրականացնում է միմիայն ներկայացված բողոքի հիման վրա և ենթակա է քննության միայն դրա սահմաններում: Ընդ որում, բողոք ներկայացնելով՝ շահագրգիռ անձն ինքնուրույն է որոշում իր բողոքի պահանջի շրջանակը, ինչը տնօրինչականության սկզբունքի դրսևորման արդյունք է, որն անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով նրան տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և դատավարական (ընթացակարգային) իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում արձանագրել, որ բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնելու պարտականությունը դրված լինելով

բողոքաբերի վրա, վերջինս է հանդիսանում շահագրգիռ այն անձը, ով, ինքնուրույն որոշելով իր բողոքի պահանջի շրջանակը, պետք է բողոքի հետ միաժամանակ ներկայացնի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները՝ որպես բողոքի բավարարմանն ուղղված էական նշանակություն ունեցող հիմքեր ու հիմնավորումներ: Ընդ որում, օրենսդիրը չի սահմանափակում բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնել միայն բողոքի հետ միաժամանակ, այլև բողոքաբերը կարող է ու զրկված չէ լրացնելու/փոփոխելու/նվազեցնելու բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները գործի քննության ընթացքում:

Զարգացնելով վերոգրյալ իրավական դիրքորոշումը՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել նաև, որ փաստացի և իրավական հիմքեր, ապացույցներ ներկայացնելու պարտականությունը կրում է նաև բողոքի քննությանը ներգրավված յուրաքանչյուր անձ և վերջինիս իր առարկությունների հիմքում ընկած փաստական հանգամանքները, որոնք ուղղված են բողոքով վկայակոչված փաստերի հերքմանը, պետք է նույնպես պարունակեն, ըստ էության, Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետով սահմանված դրույթներով նախատեսված փաստացի և իրավական հիմքեր, ապացույցներ:

Վերոնշյալ իրավական նորմերի ու փաստական հանգամանքների հիման վրա, դրանք համադրելով Ընկերության կողմից ներկայացված բողոքի փաստական հանգամանքներին, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ բոլոր այն դեպքերում, երբ բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, մասնավորապես՝ երբ բողոքի վեճի առարկան հանդիսանում է հրավերում առկա որևէ պայմանի՝ գնումների օրենսդրությանը հակասելու հանգամանքը, ապա այդ՝ բողոքով վկայակոչված փաստական հանգամանքի ժխտման ապացուցման բեռը պետք է կրի պատվիրատուն, քանի որ Կարգի 22-րդ կետի իմաստով գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ: Ուստի, նման դեպքերում, բողոքի քննության ընթացակարգին մասնակցող պատվիրատուն է պարտավոր ապացուցել իր՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի պահանջների և բողոքի առարկությունների հիմքում դրված ու գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերն ու գնումների մասին ՀՀ օրենսդրությանը համապատասխանելու հանգամանքը:

Ամբողջ վերոգրյալների ու սույն գործի փաստերի հիման վրա, ուսումնասիրելով նաև Պատվիրատուի կողմից 04.05.2021թ.-ին թիվ 08-233 գրությամբ ներկայացված աղյուսակը (այսուհետ՝ Աղյուսակ), դրանում առկա հղումները, ինչպես նաև Բողոքի և ներկայացված

բողոքի լրացումներում առկա հանգամանքները՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է հետևյալը.

Մրցույթի 1-ին չափաբաժնի մասով՝

Պատվիրատուի կողմից 04.05.2021թ.-ին թիվ 08-233 գրությամբ ներկայացված Այյուսակում մրցույթի 1-ին չափաբաժնով նախատեսված ախտորոշիչ կաթետր ապրանքի Հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերին համապատասխանող բնութագրերով որպես ապրանք արտադրողների և ապրանքային շարքի (մոդելի) անվանումներ նշված «Infinity» ապրանքային մոդելի 4F կաթետորների մասով արյան ծավալային հոսքի արագության մասին տեղեկություն առկա չէ, իսկ «Performa» ապրանքային մոդելի մասով կայքում առկա տեղեկությամբ AL1, AL2, AL3, JL4 արյան ծավալային հոսքի արագությունը 15մլ/վ է, այն դեպքում, երբ բողոքարկվող տեխնիկական բնութագրով նույն չափորոշիչը պահանջվում է ոչ պակաս 16,7մլ/վ:

Ինչպես նաև «Պրոֆտեստ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած գնային առաջարկը չի կարող պատշաճ ապացույց հանդիսանալ, քանի որ մասնակիցների կողմից հայտին կից ներկայացվող փաստաթղթերը, սույն դեպքում, մասնավորապես՝ Հավելված 1.1-ը՝ ապրանքի ամբողջական նկարագիրը, ենթակա են գնահատման հանձնաժողովի կողմից:

Մրցույթի 7-րդ և 8-րդ չափաբաժինների մասով՝

Ընկերության գրության համաձայն՝ «Xience PRO» ապրանքային մոդելի արտադրանքը, ըստ ներկայացված կայքի հղման, վերջանում է 28մմ-ով, իսկ 06.04.2021թ.-ի տեխնիկական բնութագրով պահանջվում է 2,5-4,00 տրամագծերի դեպքում, ամենակարճը՝ ոչ ավել 8մմ, ամենակարճը ոչ ավել 38մմ: Պատվիրատուի կողմից ներկայացված Այյուսակում առկա հղմամբ, անհնար է ուսումնասիրել վերջինիս ներկայացրած ապացույցը՝ կայքի հղման ոչ պատշաճ լինելու պատճառով: Իսկ ինչ վերաբերում է Պատվիրատուի կողմից ներկայացված լուսանկարին, ապա այն թույլատրելի ապացույց չի կարող համարվել, քանի որ լուսանկարում նշված թվերից չի երևում, թե դրանք ապրանքի որ չափորոշիչին են վերաբերելի:

Մրցույթի 11-րդ չափաբաժնի մասով՝

Պատվիրատուի կողմից 04.05.2021թ.-ին թիվ 08-233 գրությամբ ներկայացված Այյուսակում մրցույթի 11-րդ չափաբաժնով նախատեսված բիոլոգիական փական ապրանքի Հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերին համապատասխանող բնութագրերով որպես ապրանք արտադրողների և ապրանքային շարքի (մոդելի) անվանում, նշվել է միայն մեկ արտադրող և մոդել, այն է՝ «Սենթ Ջութ մեդիքալ», «Էպիկ»:

Վերոնշյալով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը գալիս է այն եզրահանգման, որ տվյալ դեպքում, Պատվիրատուն մրցույթի 1-ին, 7-րդ, 8-րդ և 11-րդ չափաբաժինների մասով Բողոքներ քննող անձին չի ներկայացրել որևէ վերաբերելի ապացույց առ այն, որ վերջինիս կողմից թույլ չի տրվել Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված դրույթների խախտում՝ հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմանների խոչընդոտման առումով, և որ «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/44» ծածկագրով բաց մրցույթի Հավելված 1-ով նախատեսված՝ տեխնիկական բնութագիրը, նշված չափաբաժինների մասով, կազմված է և համապատասխանում է Օրենքի 13-րդ հոդվածի և Կարգի 22-րդ կետի դրույթներին, սահմանված տեխնիկական բնութագրում առկա չափորոշիչները չեն խոչընդոտում հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմաններ ունենալու իրավունքը, ուստի մրցույթի 1-ին, 7-րդ, 8-րդ և 11-րդ չափաբաժինների մասով կազմված տեխնիկական բնութագրերը չեն բխում Օրենքի 13-րդ հոդվածով և Կարգի 22-րդ կետով սահմանված պահանջներից, ըստ այդմ՝ ենթակա են փոփոխման:

Մրցույթի մնացած՝ բողոքի վեճի առարկա հանդիասցող չափաբաժինների մասով, բողոքի քննության ընթացքում ձեռք բերված փաստական հանգամանքների հիման վրա, Բողոքներ քննող անձը հարկ է համարում արձանագրել, որ այդ չափաբաժիններով կազմված տեխնիկական բնութագրերը համապատասխանում են Օրենքի 13-րդ հոդվածով և Կարգի 22-րդ կետով սահմանված պահանջներին, ապահովում են մրցակցության հավասար պայմաններ մասնակիցների համար և բավարարում են մեկից ավելի հնարավոր մասնակիցների և արտադրողների մասնակցությունը, ուստի բողոքն այդ մասով անհիմն է և ենթակա մերժման:

Մասնավորապես՝ 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով «Emerge» ապրանքային մոդելից բացի մրցույթի հրավերի տեխնիկական բնութագրին համապատասխանում է նաև Աղյուսակում առկա «Mini Trek» ապրանքային մոդելը:

2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով՝ Ընկերությունը չի հիմնավորում, թե «Mini Trek» և «Ryujin» ապրանքային մոդելները, ինչով են այլ ապրանք՝ այդ ապրանքների տեխնիկական բնութագրերի որ չափորոշիչը չի համապատասխանում մրցույթի հրավերին:

6-րդ չափաբաժնի մասով՝ Ընկերությունը, ընդունելով, որ «Ultimaster» ապրանքային մոդելը համապատասխանում է մրցույթի հրավերի պայմաններին, անդրադարձ չի կատարել Աղյուսակում նշված երրորդ արտադրող ընկերության ապրանքային մոդելին՝ «Abluminus Des»-ին, ըստ էության, համաձայնվելով Պատվիրատուի կողմից ներկայացված փաստերին:

Բողոքաբեր ընկերությունը Բողոքներ քննող անձին չի ներկայացրել նաև առարկություններ Պատվիրատուի կողմից մրցույթի 12-րդ և 13-րդ չափաբաժինների մասով ներկայացված Աղյուսակի վերլուծություններին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից, մրցույթի 1-ին, 7-րդ, 8-րդ և 11-րդ չափաբաժինների մասով, բողոքով բերված փաստերն ու հանգամանքները՝ հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմանների խոչընդոտման առումով, հիմնավոր են, իսկ Ընթացակարգի պահանջներն անհիմն են, ինչի արդյունքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից թույլ է տրվել Օրենքի 13-րդ հոդվածով և Կարգի 22-րդ կետով սահմանված պահանջների խախտում, որպիսի պայմաններում «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից հայտարարված «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/44» ծածկագրով բաց մրցույթի հրավերը՝ 1-ին, 7-րդ, 8-րդ և 11-րդ չափաբաժինների մասով՝ մասով պետք է փոփոխել կամ դրա անհնարինության դեպքում հայտարարել չկայացած:

Անդրադառնալով Պատվիրատուի կողմից մրցույթի հրավերով առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները մեկ չափաբաժնում խմբավորելու վերաբերյալ բողոքով ներկայացված իրավական և փաստական հանգամանքներին, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել հետևյալը.

Օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ արգելվում է խմբավորել առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները մեկ չափաբաժնում, բացառությամբ այն դեպքերի, երբ պատվիրատուն հիմնավորում է նման խմբավորման անհրաժեշտությունը:

Վերոնշյալ հոդվածի վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաների խմբավորումը թույլատրվում է միայն այն դեպքում, երբ պատվիրատուն հիմնավորում է նման խմբավորման անհրաժեշտությունը, և միևնույն ժամանակ, սույն դրույթը քննարկելով գնումների օրենսդրության համատեքստում, Բողոքներ քննող անձը գալիս է այն եզրահանգման, որ խմբավորումը չպետք է հանգեցնի հնարավոր մասնակիցների և արտադրողների մասնակցության սահմանափակմանը, քանի որ գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ:

Ամբողջացնելով վերոնշյալները՝ Բողոքներ քննող անձը եզրահանգում է, որ նախ և առաջ՝ առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները մեկ չափաբաժնում խմբավորելու հարցի քննարկումը պետք է դիտարկել Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի և

Կարգի 22-րդ կետի համատեքստում, այնուհետև՝ դիտարկել այն որպես առանձին իրավակարգավորող դրույթ՝ անդրադառնալով հիմնավորվածությանն ու օրինաչափությանը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Պատվիրատուն բողոքի վեճի առարկան հանդիսացող մրցույթի 1-ից 9-րդ և 11-ց 13-րդ չափաբաժիններով սահմանված առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները խմբավորել է մեկ չափաբաժնում:

Որպես Օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դրույթների կիրառման հիմնավորում, Պատվիրատուն Բողոքներ քննող անձին է ներկայացրել ՀՀ ԱՆ նախարարի 22.07.2016թ.-ի թիվ ԱՄ/06.1/8130-16 գրությանն ի պատասխան ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրված գրությունը, առ այն, որ հաշվի առնելով այն հանգամանք, որ տվյալ դեպքում Գրության մեջ նշված գնման առարկաների մասով տարվա ընթացքում առկա է լինում փաստացի կարիքի փոփոխություն, առաջարկել են այդ գնման առարկաների գնման գործընթացը կազմակերպել դրանց համար գնումների պլանով հաստատված /կամ գնումների պլանում համապատասխան գումարը ներառելիս դրա հաշվարկի հիմքում ընկած/ ամբողջ քանակի համար՝ հրավերով նախատեսելով, որ մասնակիցները պետք է գնային առաջարկը ներկայացնեն այդ խմբաքանակի համար, իսկ գնման առարկաները փաստացի կմատակարարվեն՝ ըստ պաավիրատուի կողմից ներկայացվող պահանջի: Ինչպես նաև Պատվիրատուն ներկայացրել է 20.04.2021թ.-ին թվագրված մասնագիտական կարծիք:

Բողոքի քննության ընթացքում բողոքաբերի և Պատվիրատու կողմից ներկայացված վերոնշյալ հանգամանքները համադրելով գործով ձեռք բերված ապացույցներին ու փաստական տվյալներին, ինչպես նաև դրանք դիտարկելով սույն որոշմամբ արված վերլուծությունների ու եզրահանգումների համատեքստում՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված իրավակարգավորման կիրառման համար՝ անկախ հիմնավոր լինելու կամ չլինելու և հիմնավորվածության աստիճանի (օբյեկտիվ հանգամանքներից ելնելով), Պատվիրատուն պետք է նախ և առաջ հաշվի առնի Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասով և Կարգի 22-րդ կետով նախատեսված դրույթները՝ հնարավոր մասնակիցների համար ապահովի մրցակցության հավասար պայմաններ, դրանով իսկ բացառելով գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացումը: Նշված դրույթների կիրառումն ապահովելուց հետո նոր միայն Պատվիրատուն կարող է առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները խմբավորել մեկ չափաբաժնում՝ հիմնավորելով խմբավորելու անհրաժեշտությունը, դրա օրինաչափությունն ու հիմնավորվածությունը՝ ելնելով օբյեկտիվ պատճառներից ու այլընտրանքային՝ առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաների տարբեր չափաբաժիններում ներառելու հնարավորության բացակայությունից:

Ուստի, վերը նշված եզրահանգումներով պայմանավորված՝ բողոքով ներկայացված հիմնավորումներով և վերլուծությամբ հրավերի 1-ից 9-րդ և 11-ից 13-րդ չափաբաժիններում փոփոխություններ կատարելու մասին պահանջն ենթակա է բավարարման մասնակիորեն՝ մրցույթի հրավերի 1-ին, 7-րդ, 8-րդ և 11-րդ չափաբաժինների մասով գնման առարկա հանդիսացող բնութագրերն ենթական են փոփոխման, իսկ բողոքի վճի առարկան հանդիսացող մյուս չափաբաժինների մասով բողոքն ենթակա է մերժման՝ սույն որոշմամբ նշված հիմքերով:

Անդրադառնալով Ընկերության կողմից բողոքով ներկայացված բեռնափոխադրման և մաքսազերծման հետ կապված ժամկետների հանգամանքներին, ուսումնասիրելով բողոքաբերի կողմից որոշ ընկերություններին ուղղված հարցումները և ստացած պատասխանները, ապա Բողոքներ քննող անձը փաստում է, որ այդ գրություններով չեն հիմնավորվում, որ ապրանքների ներկրման համար անհրաժեշտ է 15-20 օր: Հատկապես երբ այդ նույն գրագրությունների որոշ մասում, հստակ նշվում է, որ փոխադրման ժամկետը՝ 3 օր, մեկ այլ գրությամբ բեռնափոխադրման ժամկետ նշվում է 4-7 կամ 4-5 աշխատանքային օր:

Հարկ է նկատել նաև, որ Հրավերով սահմանվել է, որ Պատվիրատուն Առաջին խմբաքանակի մատակարարումը չի կարող պահանջել պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացուցային օրից շուտ, ինչպես նաև Հրավերի 6 հավելվածով՝ ապրանքի մատակարարման պայմանագիր 2.1.7 կետով սահմանվել է, որ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը: 2.1.7.1 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

Վերոգրյալների հաշվառմամբ, Բողոքներ քննող անձը գալիս է այն եզրակացության, որ հրավերով ապրանքի մատակարարման առկա ժամկետները բավարար են և օբյեկտիվորեն հիմնավորված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

**Ո Ր Ո Շ Ե Ց**

«Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից 14.04.2021թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2021/30 ծածկագրով բողոքը մասնակիորեն:

Պարտավորեցնել «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/44» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին կատարել սույն որոշմամբ նշված չափաբաժինների մասով փոփոխություններ: Փոփոխություն կատարելու անհնարինության դեպքում գնման ընթացակարգը նույն չափաբաժինների մասով հայտարարել չկայացած:

Մնացած մասով բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ**
**ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝** **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**